



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

888
ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Պոնեռական սերիա

ԱՆԴՐԵՅ ՈՒՍՊԵՆՍԿԻ

ՎԱՂԱԺԱՄ ՍԵՌԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
== Վ Ն Ա Ս Ը ==

(Հանրամասչելի շարադրութիւն)

Թարգմ. ԳԱՐ. ՀԱԿՈԲՅԱՆ

ԴԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Ֆեբրվար - 1927

24

1000

✓
ԿՈՄՅԵՐԻՏ ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՆԴՐԵՅ ՈՒՍՊԵՆՍԿԻ


613.88



**ՎԱՂԱԺԱՄ ՍԵՌԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՆԱՍԸ**

(հանրամասչելի շարադրություն)

Թարգմ. ԳԱՐ. ՀԱԿՈԲՅԱՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՖԵՐԵՎՐԱՆ 1927

A 4160

Դրառեպփար № 64բ. Հ. 504. Տիրած 2000.

Պետհրատի յերկրորդ տպարան Յերևանում — 199.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թե՛ բուսական և թե՛ կենդանական թագավորության բոլոր կենդանի որգանիզմներին հասուկ է բազմաճյուղ ընդունակությունը: Բազմաճյուղ — «մի կյանք է այդ, առանձին որգանիզմից դուրս»: մեռնում են առանձին բույսեր կամ կենդանիներ, բայց իրենց գոյության ժամանակ նրանք կարողանում են ծնել կյանքի համար նոր, իրենց նման արարածներ ու, այդպիսով, վողջ տեսակի կյանքն ամբողջովին չի դադարում:

Ամենապարզ, այսպես ասած «միաբջիջ» կենդանիները պարզ բաժանումով են բազմանում: Որինակ, վորևե վարակիչ հիվանդություն առաջացնող փոքրիկ եյակ «ամյոբա» կամ «բացիլը» սկսում է յերկու մասի բաժանվել և վերջի վերջո յերկու նոր եյակների, յերկու «ձագի» յե բաժանվում: Այս ձագերն աստիճանաբար մեծանում են, ծծելով իրենց շրջապատի սննդարար հյութերը, և, յերբ նրանք մեծանան, հասունանան ու վորոշ չափի հասնեն, նրանցից ա-

մեն մեկն իր հերթին նույնպես յերկու մասի
կբաժանվի: Բազմանալու այս ձևն ամենապարզ
ձևն է: Ամյոբան ու քացիլը սեռ չունին, նրանք
«տղամարդկանց» և «կանանց» չեն բաժանվում.
նրանցից ամեն մեկն ընդունակ է «ձագերի» բա-
ժանվելու:

Միաբջիջ մի քանի այլ պարզ կենդանիներ
փոքր ինչ տարբեր ձևով են բազմանում. որի-
նակ, նրանք՝ ամյոբայի պես մեջտեղից չեն կիս-
վում, այլ բաժանվում են յերկու այնպիսի մա-
սերի, վորոնցից յերկրորդ մասնիկը՝ մոր մարմ-
նից կպած՝ խուլի (պալար) պես մի քան է: Նա՝
նստած է մոր մարմնի վրա, — քանի. դեռ վայր
չի ընկել, — այնպես, ինչպես կոկոնը (բողբոջ)
ծառի ճյուղի վրա: Ուստի բազմանալու այս ձևը
կոչվում է «բողբոջում»: Կան ուրիշ շատ պարզ
էյակներ, վորոնք առանձին փոքրիկ մասնիկներ —
«սպորներ» տալով են բազմանում:

Մինչև հիմա մենք խոսեցինք անսեռ բազ-
մացման մասին. ամեն մի բջիջ, առանց մյուսի
մասնակցության, վորոշ աստիճանի զարգացման
հասնելով, կարող եր կյանք տալ մեկ կամ մի
քանի էյակների: Բայց այս որինակ բազմացու-
մը միայն որդանիղմի պարզ կազմվածք ունեցող,
ամենապարզ էյակների հետ է պատահում: Այն
կենդանիները, վորոնք կյանքի զարգացման աս-

տիճանի վրա համեմատաբար բարձր են կանգնած, վորոնց որդանիզմը շատ բարդ և կառուցված, նրանք «սեռական ճանապարհով» են բազմանում: Վորպեսզի աշխարհ բերեն իրենց նմանը, տվյալ դեպքում արդեն տարբեր սեռի յերկու եյակի մասնակցությունն և անհրաժեշտ, վորոնցից մեկն «արուն» և, մյուսը՝ «եգը»:

Առհասարակ, զուտ անսեռ բազմացում բնության մեջ բավականին հազվագեպ և պատահում: Նույնիսկ ստորին կենդանիների մեջ, ամենից հաճախ՝ այն նկատվում և սեռական զուգավորումից, ըստ վորում, տեղի չե ունենում սերունդների հաջորդականություն և բազմացման ձևերի փոփոխություն: Որինակ, ծովում գոյություն ունի մի փոքրիկ կենդանի, վորը «հիդրա» չե կոչվում: Սկզբում հիդրան անսեռ ճանապարհով, այսինքն՝ բողբոջումով և բազմանում. սակայն, այն բողբոջոները, վորոնք մորից պոկվում և ազատ լողում են ջրի մեջ, արական ու իգական սեռական բջիջներ ունին: Այս բջիջների զուգավորումից (այս արդեն սեռական բազմացում և) ստացվում և թրթուռ, վոր հետագայում զարգանալով՝ հիդրա չե դառնում: Այս հիդրան ել, հասունանալով, դարձյալ բողբոջումով և բազմանում, այսինքն՝ անսեռ ճանապարհով, և այսպես՝ շարունակ: Ինչպես տեսնում ենք, այստեղ անսեռ

և սեռական բազմացումն հաջորդում են իրար:

Սակայն, բոլոր կենդանիները, վորոնք իրենց զարգացման բարձր կետին են հասնում, — մասնավորապես, իհարկե, մարդը, միայն սեռական ճանապարհով են բազմանում: Կենդանիներն «արուների» և «եգերի» («տղամարդկանց» և «կանանց») են բաժանվում, վորոնք միմյանցից զանազանվում են վոչ միայն մարմնի և հատկապես սեռական գործարանների կառուցվածքով, այլև նույնիսկ հոգեկան կառուցվածքով: Արուի գործն է — բեղմնավորել եգին, իսկ եգինը — զավակ հասցնել, ծնել և կերակրել նրան:

Սկզբում մենք խոսեցինք այն կենդանիների մասին, վորոնք ընդամենը մեկ բջիջից են բաղկացած, սակայն, բուսական և կենդանական թագավորության աստիճանով բարձրանալուն զուգընթաց՝ որգանիզմներն ավելի ու ավելի յեն բարդանում: Բոլոր բարձր որգանիզմներն անթիվ ու անհամար բջիջներից են բաղկացած: Այդ բջիջները կենդանի նյութի ամենափոքրիկ մասնիկներն են հանդիսանում, դրանք, կարծեք, աղյուսներ լինին, վորոնցից կառուցվում է մարմինը:

Բջիջները լինում են զանազան ձևի ու զանազան կազմության, նայած թե նրանք ինչ դեր են խաղում որգանիզմի մեջ: Հատուկ «գեղձա-

յին» բջիջները մասնակցում են որգանիզմի հա-
մար անհրաժեշտ հյուսթեր, որինակ՝ մարսողու-
թյան հյուսթ, թուք, լեղի պատրաստելուն, փոսկ-
րաբջիջներն որգանիզմին ծառայում են իբրև
հենարան և ամրություն են տալիս. նյարդային
բջիջները—գրգիռ են ընդունում ու հաղորդում.
սակայն ինչպես տեսնում ենք, բոլոր այս բջիջ-
ներն որգանիզմի կենսական պրոցեսներին են ծա-
ռայում: Սրանք — «բուսական» բջիջներ են, փորոնց
գործունեություն շնորհիվ զարգանում ու ապ-
րում է որգանիզմը: Նման բջիջները բազմաթիվ
են: Սակայն գոյություն ունի բջիջների մի ու-
րիշ, սակավաթիվ խմբակ — սեռական բջիջներ,
փորոնց նպատակը փոշ թե տվյալ որգանիզմի
կյանքը պաշտպանելն է, այլ ուրիշը — իր նմանն
ստեղծելն է, այսինքն՝ տեսակի բազմացումը:
Սեռական ճանապարհով զարգացող որգանիզմն
ինչ կազմություն էլ ունենա, միշտ նման բջիջ-
ներով հատուկ գործարան ունի, փորոնց դերը
տեսակի գոյությունը շարունակելն է:

Սեռական բջիջները յերկու տեսակի յեն լի-
նում՝ արական («սպերմատոզոտիդներ»), «սերմ-
նիկներ») և իգական (ձվիկներ): Արական և ի-
գական բջիջների միացումն (կամ ինչպես ասում
են «իգական բջիջի բեղմնավորումը») սկիզբն է
դնում սաղմի զարգացման, փորից հետագայում

նոր ու կատարյալ որդանիղձ է գոյանում: Այսպիսով՝ յերբ որդանիղձը վորոշ շրջան է անցնում, վորը նրա կյանքն է կոչվում ու նրա մահով վերջանում, դրանից հետո սեռական բջիջները շարունակում են իրենց ծնողների կյանքը: Որդանիղձը պահում է իր գոյությունն իր սերունդների մեջ:

Բեղմնավորումը տեղի չէ ունենում արուի և եգի սեռական գործարանների զուգավորումով: Սրան՝ «սեռական ակտ» կամ «զուգավորում» են ասում: Այդ ժամանակ տղամարդուց հոսող սերմը, վոր իր մեջ սպերմատոզոիդներ է պարունակում, ընկնում է կնոջ սեռական ապսլարատի մեջ ու բեղմնավորում այնտեղ հասունացող ձվիկները: Սաղմը մոր մարմնի մեջ, արգանդում զարգանում է և վորոշ աստիճանի զարգացման հասնելուն պես ծննդաբերության միջոցով դուրս է մղվում:

Ամեն մի կենդանի եյակի մեջ ցեղը շարունակելու բնազդ կա: Ինչպես մենք հենց այժմ տեսանք, ամենաբարձր տիպարի կենդանիների մեջ, բազմացումը միայն սեռական մերձեցման միջոցով կարող է տեղի ունենալ, այսինքն, դրա համար հարկավոր է ուրիշ սեռի եյակի մասնակցությունը: Դեպի սեռակտն գործունեյությունը մղողը — «սեռական զգացողությունն» է

վոր առանձին հակոճով եւ արտահայտվում դե-
պի մյուս սեռի եյակը: Սկզբում շատ մութ ու
անորոշ այդ հակոճը, հասակին զուգընթաց, սե-
ռական ակտի ձգտում եւ դառնում:

Սեռական ակտն ինքն ըստինքյան բազմաալու-
ծեւ եւ: Արտադրություն իրեն նման եյակների—
այս եւ սեռական մերձեցման միակ իմաստը: Բայց
մարդիկ շատ և շատ հաճախ ձգտում են սեռա-
կան ակտին՝ միմիայն նրա հետ կապ ունեցող
հաճելի զգացողությունների համար: Յերեխա
արտադրելու ձգտումը յերկրորդական տեղ եւ
բռնում, կամ դեռ ավելին՝ յերեխա ծնրելու դեմ
միջոցներ են ձեռք առնվում: Սեռական ակտը
կորցնում եւ այն իմաստը, վորը բնությունն եւ
նրան թելադրել ու միմիայն բավականության մի-
ջոց եւ դառնում: Սեռական ակտի դերի այս փո-
խանակության պատճառները շատ խորն են և
մենք նրանց թեթեւակի կշռափենք շարունակու-
թյան մեջ: Բայց այս դեռ քիչ եւ— ձգտելով սե-
ռական ակտին, իբրեւ բավականության միջոցի,
յերկու սեռի յերիտասարդությունը սեռական
հարաբերություններն հաճախ սկսում են շատ
վաղ, յերբ որգանիզմը դեռ հասունացած չի, յերբ
սեռական կյանքի հետ կապ ունեցող նյարդային
համակարգության ցնցումները նրան ուժասպառ
են անում ու քայքայում: Մեր գլխավոր նպա-

տակն այն է, վոր ցույց տանք, թե վորքան վնասակար են վաղաժամ սեռական հարաբերութիւնները, ապացուցել, վոր վորոշ հասակում այդ հարաբերութիւնների մեջ ժուժկալութիւնը վոշ միայն վնասակար չէ, — ինչպես, ցավոք սրտի, վոմանք կարծում են, — այլ ընդհակառակը, որգանիզմի համար միանգամայն ցանկալի չէ և ոգտակար:

Գլուխ I

Սեռական հասունութիւն

Մենք տեսանք, վոր միաբջիջ, պարզ, փոքրիկ եջակն անգամ սկսում է բազմանալ միայն այն ժամանակ, յերբ նա զորանում է ու վորոշ աստիճանի զարգացման հասնում: Նույնը կարելի չէ ասել և մարդկանց վերաբերմամբ: Բազմանալու հնարավորութիւնը յերևան է գալիս վորոշ հասակում, մանկական բավականին յերկարատև շրջանից հետո, նրանից հետո, յերբ մարդն այն շրջանն է ապրում, վորը «սեռական հասունացման» շրջան է կոչվում, ու սեռական հասունացման է հասնում: Վորպեսզի հետագա բոլոր բացադրութիւնները մեզ համար պարզ լինին, մենք պետք է մանրամասն կանգ առնենք «սեռական» հասունութեան ելութեան բացատրութեան վրա:

Տղամարդու սեռական հասունացումը տեղի
յե ունենում այն ժամանակ, յերբ նրա սեռա-
կան գեղձերը (այսպես ասած՝ «ձվիկները»),
ձեռք են բերում հասունացած, կանացի ձվիկ-
ներ բեղմնավորելու ընդունակ սեռական բջիջ-
ներ, այսինքն՝ սպերմատոզոիտներ։ Մանկական
հասակում սեռական գեղձերն այս ընդունակու-
թյունը չեն ունենում։

Նույնը կարելի յե ասել նաև կանանց վե-
րաբերմամբ։ Կնոջ սեռական հասունությունը
բնորոշվում ե նրա սեռական գեղձերի («ձվա-
րանների») այնպիսի դրությամբ, յերբ նրանք
ընդունակ են դառնում սեռական բջիջներ, այս-
ինքն՝ ձվիկներ արտադրելու, վորոնք տղամար-
դու սերմով բեղմնավորվել կարողանան։

Սակայն սեռական հասունությունը չի սահ-
մանափակվում այն փոփոխություններով վորոնք
տեղի յեն ունենում տղայի կամ աղջկա սեռա-
կան օրգաններում, այսինքն՝ մեր մարմնի այն
մասում, վորը բազմացման գործն ե վարում։ Այդ
իսկ ժամանակ՝ «իսկական տղամարդ» կամ «իս-
կական կին» դառնալու շեմքին վրա դնող պա-
տանիների օրգանիզմների մեջ տեղի յեն ունե-
նում մի շարք խորը փոփոխություններ։ Վրա յե
հասնում կյանքի նոր շրջան, արբունքի շրջանը,
և այս շրջանում տարբերությունը սեռերի մի-

ջե ավելի սուր ե դառնում, քան մանկության շրջանում:

Պատանու հնչեղ ու մանկական ձայնը՝ առնական ավելի կոշտ, ցած ու խուլ ձայնի յեփոխվում: Ձայնի լարերը յերկարարում են, շրնչափողը բոլոր չափերով մեծանում ե, ամբողջ վիզը հաստանում ե: Վողջ որգանիզմը, կարծեք, ինչ վոր ներքին մղումով սկսում ե ուժեղ կերպով զարգանալ. սրտի ծավալն արագ ու զգալիորեն, գրեթե կրկնակի, մեծանում ե, վորի հետեւանքով ուժեղանում ե որգանիզմի սննդատու գործունեյությունը: Մատաղ որգանիզմն ամրանում ե. ուժեղ կերպով զարգանում են շարժիչ ապարատները, մանավանդ վերջավորությունները:

Սեռական գործարաններն այդ ժամանակ նույնպես ուժեղ կերպով զարգանում են: Սեռական գեղձի ուժեղանալուն զուգընթաց՝ ուժեղանում են մաշկի գեղձերի գործունեյությունն ու մազերի աճումը: Մազեր են յերևում սեռական գործարանների ու վերին շրթունքի վրա և պատանիները բեխերի դուրս գալը միանգամայն իրավացիորեն են նկատում իբրև նշան վերահաս առնական հասունության: Սեռական գործարանների զարգանալուն զուգընթաց, տեղի յե ունենում սեռական գրգիռ, առաջ ե գալիս կանգնումն (երեկցիա, այսինքն՝ սեռական մարմինն

արյունով լցվում ե)։ Սովորաբար գիշերն անկողնի մեջ, մանավանդ լուսադեմին, պատահում են յերկարատև կանգնումներ, վորոնցից մի առժամանակ հետո գիշերային յերազախաբուժյուններ (պոլյուցիաներ) են տեղի ունենում (այսինքն՝ ակամա սերմնահոսություն), վորոնք սովորաբար տեղի չեն ունենում քնի ժամանակ։ Հետագայում այս սերմնահոսություններն սկսում են ընթացակցվել հեշտասիրական յերազներով, ըստ վորում սովորաբար կնոջ հետ սեռական մերձեցում ե տեսնվում։

Աղջիկների սեռական հասունությունը յերկու տարով առաջ ե տեղի ունենում, քան տղաներինը (սեռական հասունության տեղի ունենալու ժամանակի և սեռական զգացողության առաջ գալու ժամկետների մասին կխոսվի ստորև)։ Աղջկա հասունությունը տեղի ունենալը՝ արտաքինից նրա դեմքի փոփոխություններով ե յերեվում. յերեխան սկսում ե աղջիկ դառնալ և այդ ժամանակ, ինչպես ասում են, աղջիկը «զարգանում» ե։ Մաշկի տակ (մանավանդ ուսերի և ազդերի վրա) ճարպն ավելանում ե, ուստի մարմինն ավելի կլոր ու հավասար գծապրություններ ե ստանում. առաջվա անդուր աղջիկն ավելի գեղեցիկ ու գրավիչ ե դառնում։ Աղջիկների ստինքները, վորոնք տղամարդու ստինքներից գրեթե

վոչնչով չեն տարբերվում, ծավալով մեծանում են: Յերեսը՝ մանկական դեմքի փոխարեն՝ կանացիական արտահայտություն է ստանում, սեռական անդամի վրա մազեր են յերևում և ձայնն ավելի հնչեղ է դառնում: Շատ մեծ փոփոխություններ է կրում իրանի ստորին մասը, այսպես ասած՝ «կոնքը»։ լայնքից նրա ծավալը մեծանում է, յետևի պատը (գավակը) դեպի յետ է թեքվում, և ազդերն ավելի յեն կլորանում: Սեռական հասունացման մոտերքը կոնքի բնական այս փոփոխությունը շատ նպատակահարմար է, վորովհետև, բեղմնավորության մոմենտից սկսած, փորի հենց այդ մասում ել տեղի յե ունենում «պտղի» աճումն ու զարգացումը, հետևապես, այնտեղ բավականին տեղ, ինչպես և համապատասխան պայմաններ են պետք, վորպեսզի «պտուղը» զարգանա և աշխարհ դա: 10 — 12 տարեկան հասակից արդեն աղջկա կոնքը լայնքից աճում է և սեռական հասունության մոտերքին անհրաժեշտ ծավալ է ստանում: Կնոջ իրանի այս իսկ առանձին ձևն ազդում է նրա քայլվածքի վրա, վորով կինը սովորաբար տարբերվում է տղամարդուց:

Այս շրջանում մեծ փոփոխության է յենթարկվում նաև կնոջ շնչառության ձևը. տղամարդկանց ու յերեխաների մեջ շնչառության

ժամանակ գլխավորապես վորովայնային մկան-
ներն են աշխատում («շնչառության վորովայ-
նային ձև»), իսկ կանսնց մեջ, սեռական հա-
սունության ժամանակից սկսած, առաջ ե գա-
լիս «շնչառության կրճքի ձև», այսինքն՝ նրանք
սկսում են ավելի շատ կրճքով շնչել: Այս յերե-
վույթի ավելի կարևոր նշանակությունը հղիու-
թյան ժամանակ ե յերևան գալիս. յեթե կնոջ
մեջ իշխողը լիներ վորովայնային շնչառությու-
նը, ապա այդ շրջանում, շնորհիվ արգանդի հըս-
կայական չափով մեծանալուն ու փորի մեջ
զգացվող ծանրության, շնչառությունը չափազանց
կդժվարանար: Այսպիսով, սեռական հասունու-
թյան ժամանակ աղջկա որգանիզմում տեղի ու-
նեցող փոփոխությունները, մեծ մասամբ ուղղ-
ված են լինում դեպի այն, վորպեսզի թեթևաց-
նեն կնոջ այն դժվարությունները, վոր նա ստիպ-
ված և լինում հաղթահարել բնության տվածը
կատարելու—նոր եյակ աշխարհ բերելու ժա-
մանակ:

Իսկ ի՞նչ ե տեղի ունենում որգանիզմի մեջ
սեռական հասունացման շրջանում և ի՞նչից են
առաջ գալիս նրա մեջ այդքան խոր ու լուրջ
փոփոխությունները:


Սրա պատասխանը՝ ներգատուցքի (ներքին
սեկրեցիայի) գեղձերի վերաբերյալ գիտությունն

ե տալիս: Մարդու և, առհասարակ, կենդանա-
կան որգանիզմի մեջ մի շարք գեղձեր կան, վո-
րոնց նշանակութիւնը շատ յերկար ժամանակ
պարզ չեր: Այս ուղղութիւնը կատարած յերկա-
րատե աշխատանքներից հետո պարզվել է, վոր
այդ գեղձերը, ինչպես և մի քանի այլ գործա-
րաններ, այսպես ասած, «ներգատուցքների» ըն-
դունակութիւններ ունեն, այսինքն՝ նրանք ար-
յան մեջ այնպիսի նյութեր են արտաթորում,
վորոնք հսկայական նշանակութիւն ունին ամ-
բողջ որգանիզմի համար՝ միասին վերցրած: Այս
նյութերը կոչվում են «հորմոններ»: Այս հարցի
հետագա ուսումնասիրութիւնը ցույց է տվել,
վոր կյանքի տարբեր շրջաններում տարբեր գեղ-
ձերն որգանիզմի վրա յուրահատուկ ձևով են
ազդում: Մեր մարմնի կյանքում ըստ ժամանա-
կի առաջին դերը խաղում են փուշիկի գեղձերն
ու ուղեղի հարուկը, բաց մարդիկ սեռական հա-
սունացման շրջանին վորքան ավելի յեն մոտե-
նում, այդ գեղձերի նշանակութիւնն այնքան
ավելի յե փոքրանում ու այնքան ավելի յեն դեր
ունենում մյուս գեղձերը — վահանաձէն ու սե-
ռականը:

Բացատրենք ներգատուցքի գեղձերի նշա-
նակութիւնը մի քանի որինակներով: Ուղեղի
հարուկը — փոքրիկ (սխեռի չափ) մի գեղձ է,

ընկած ուղեղի հիմքի մասն Այս գեղձը կապ ունի
մարմնի զարգացման հետ: Յեթե մանկական հա-
սակում գեղձն ինչ ինչ, պատճառով սկսի ուժեղ
կերպով աշխատել, բարձրացրած քանակությամբ
արտադրելով իր հորմոնները, յերեխայի վոսկրե
կմախքը կսկսի արագորեն զարգանալ, ու մարդը
կարող է հսկա դառնալ: Իսկ յեթե ուղեղի հարուկի
գործունեությունն ուժեղանա վոչ թե մանկա-
կան հասակում, այլ հասակավորի մեջ, այդ դեպ-
քում մեծացումը վոչ թե ամբողջ կմախքին
կվերաբերի, այլ նրա մի քանի մասերին: ձեռ-
քի դաստակները վոտքերի թաթերն ու այտ-
ոսկրները, մանավանդ վերին և ներքին ծնոտ-
ները կսկսեն յերկարանալ: Յեթե, ընդհակառա-
կը, ուղեղի հարուկը հանվի, կմախքը կդադարի
աճելուց, և մարդը թզուկ կդառնա: Այս դեպքում
վոսկրները լրիվ չեն աճի, կծուվեն և հեշտու-
թյամբ կկոտորվեն:

Շնչափողի առջև ընկած վահանաձև գեղձը
հորմոններ է արտադրում, վորոնց՝ ուժեղ կերպով
զոյանալը նյարդային համակարգության քայ-
քայում («Բազեդյան հիվանդություն») է առաջ
բերում: Այս գեղձի արտադրությունը քանակա-
հետևանքն այն է լինում, վոր ծանր հիվանդու-
թյուններ՝ ապշություն (идиотизм), լորձահոսու-
թյուն (միկսեդիա) են առաջ գալիս: Նույնն



ե ստացվում նաև այդ գեղձը հանելուց: Իսկ նրա մոտ գտնվող «մերձվահանաձև գեղձը» հանելը ամբողջ որգանիզմի քայքայում ե առաջ բերում, իսկ այնուհետև՝ նաև մահ:

Մենք տեսնում ենք, վոր մեր մարմնի գանազան տեղերում գտնվող փոքրիկ գեղձիկների գործունեությունը հսկայական նշանակություն ունի ամբողջ որգանիզմի համար՝ միասին վերցրած:

Այժմ մեզ պարզ կլինի, թե ամբողջ որգանիզմում սեռական գեղձերի ուժեղացրած գործունեության սկիզբն ինչո՞ւ յե խորը փոփոխություններով ընթացակցվում: Բանից դուրս ե գալիս, վոր աղամարդու սեռական գեղձերը — ձվիկներն ու կնոջ — ձվարանները միայն սպերմատոզոիտներ ու ձվեր չի վոր պատրաստում էն, վորոնց միացումից սկիզբ ե դրվում մի նոր եյակի կյանքի:

Թե ձվիկները և թե ձվարանները նույնպես ներգատուցքի գեղձեր են և ամբողջ մարմնի կյանքի համար հսկայական նշանակություն ունեցող հորմոններ են արտաթորում արյան մեջ: Հենց այս հորմոնների առաջ գալով ել բացասորվում ե սեռական հասունացման շրջանում սեռական յերկրորդ նշանի չերևան գալը: Այս բանը նրանով ե ազդացուցվում, վոր որինակ, յեթե աղա-

մարդու սեռական գեղձերը հանվեն («ներքինաց-
վի»), նրա սեռական յերկրորդ նշաններն աստի-
ճանաբար կչքանան. բեխ ու մորուքը կդադարեն
աճելուց ու նույնիսկ կթափվեն, ձայնը՝ կնոջ
ձայնի պես սուր ու բարձր կդառնա և մարմնի
վրա ուժեղ ճարպակալում կնկատվի: Կնկատվեն
թուլություն, նախաձեռնության ու յեռանդի
նվազում և, ընդհակառակն, աշխատունակության
ավելացում: Յեթե կնոջը ներքինացնեն, այս-
ինքն՝ նրա ձվարանները հանեն, կնկատվի կա-
նանց սեռական յերկրորդ նշանների աստիճանա-
բար թուլացում. ստինքները կփոքրանան, ձայնը
կկոշտանա և ուժեղ կերպով կզարգանա մկանա-
յին համակարգությունը:

Արդ, սեռական հասունացումը տեղի ունե-
նալու ժամանակ միանգամայն փոխվում է պա-
տանու թե ֆիզիկական և թե հոգեկան տիպարը:
Յերեխան աստիճանաբար մեծանում, իր ցեղը
շարունակելու ընդունակ մի եյակ է դառնում:
Իսկ յե՞րբ է տեղի ունենում որգանիզմի այդ հա-
սունացումը:

Յեթե մենք նայելու լինենք անասուններին,
կտեսնենք, վոր նրանց սեռական հասունությու-
նը շատ վաղ է տեղի ունենում: Հենց նոր ծնված
անասունը քիչ բանով է տարբերվում մեծից:
Զվի միջից նոր դուրս յեկած ձագն արդեն վազ-

վրդուժ, կտցում, վտանգից պատասպարվում ե ու
շատ կարճ ժամանակում մեծ հավի զարգացման
ե հասնում: Կատվի ձագը կարճ ժամանակից հե-
տո սովորում ե կատվի բոլոր հարպիկություն-
ները: Բայց մարդու յերեխան ծնվում ե զուրկ
այն ամենից, ինչ վոր մարդ մեծ հասակում ե
ունենում, և այս բանը նրան տարբերում ե
ստորին անասուններից: Բոլոր հասկացողություն-
ները նա յուրացնում ե շատ դանդաղ, մի շարք
տարիների ընթացքում, մանկությունից արբուն-
քին անցնելու շրջանում: Բայց դրա փոխարեն,
տարեց տարի, նա միշտ ավելի ու ավելի չե
հայտնաբերում իր առավելությունը կյանքի զա-
նազան շրջաններում մինչև վոր այն տարածու-
թյունը, վորը բաժանում ե նրան անասունից,
այնքան ե մեծանում, վոր կարծեք թե մարդու
ամբողջ գոյությունը բնության այլ թագավո-
րության մեջ ե ընթանում:

Սեռական նորմալ հասունությունն իր հետ
բոլորում ե մանկական բավականին չերկարատև
շրջանը: Սովորաբար, աղջկա սեռական հասու-
նությունը տեղի չե ունենում 13 — 15, իսկ տղա-
ներինը՝ 14 — 16 տարեկան հասակում, բայց պա-
տահում են նաև սեռական ել ավելի վաղաժամ
զարգացման դեպքեր: Որգանիզմի կյանքում այս
շրջանի կատարյալ թևակոխումը ճիշտ կերպով

չի կարելի վորոշել, վորովհետև այն կախված է մի շարք պայմաններից, որինակ՝ կյանքի պայմաններից, վորոնց մեջ պատանին զարգանում է: Ճիշտ է, առաջին տեղն այստեղ պետք է ցեղի ազդեցութիւնը տալ. ապացուցված է, վոր հարավային և արևելյալ ցեղերի սեռական հասունութիւնն ավելի շուտ է տեղի ունենում, քան հյուսիսային ցեղերինը: Պակաս նշանակութիւն չունին նաև կլիմայական պայմանները: Հնդկաստանում, Արաբիայում և այլ տաք յերկրներում կարելի յէ տեսնել ամուսնացող 9—10 տարեկան յերեխաների, վորոնք այդ հասակում արդեն սեռական հասունութեան են հասել:

Սեռական հասունութեան ժամանակից սկսած տղայի սեռական ապպարատի մեջ մի քանի նոր յերևույթներ են նկատվում: Յերևան են գալիս «կանգնումներ» (երեկցիա) և «յերազախաբութիւններ»: «Կանգնում» կոչվում է այն, վոր սեռական անդամն արյունով լցվում, ուռչում է,— այս բանը տղամարդուն անհրաժեշտ է, վորպեսզի նա կարողանա իր սեռական անդամը կնոջ հեշտոցի մեջ անցկացնել, սեռական ակտ կատարել: Յերազախաբութիւնն էլ կոչվում է այն, վոր քնած ժամանակ տեղի յէ ունենում սերմնահառսութիւն: Յերեխաների սեռական զեղծերը («ձվիկները»), ինչպես մենք ասացինք, ան-

գործունյա դրության մեջ են գտնվում: Բայց ժամանակի ընթացքում, տղայի ընդհանուր դարգացմանը զուգընթաց, այդ գեղձերն սկսում են իրենց գործունեությունը յերևան բերել — սերմ պատրաստել: Սկզբում — ուղղակի ջրիկ մի նյութ է այդ, իսկ այնուհետև նրա մեջ առաջ են գալիս առանձին «սերմնաթելեր» («սերմնիկներ», վորոնց նաև «սպերմատոզոիդներ» են ասում) վորոնց թիվը հետզհետե մեծանում է, այնպես վոր սերմը վերջիվերջո սերի պես թանձրանում, իր մեջ բազմաթիվ այդպիսի սերմնիկներ պարունակող մի նյութ է դառնում: Հետագայում, սեռական ակտի ժամանակ, սերմը թափվում է կնոջ սեռական գործարանների մեջ, և այդ սերմնիկներից մեկը բեղմնավորում է նրա հասունացած ձվիկը: Իսկ յեթե տղամարդը կամ հասունացող պատանին ժուժկալ են ապրում և կնոջ հետ սեռական հարաբերություններ չեն ունենում, գիշերը «յերազախաբությունների» միջոցով, կարող է սերմնահոսություն պատահել:

Պետք է իմանալ, վոր տղաների զուգավորման ընդունակությունը 2—3 տարով առաջ է տեղի ունենում, քան բեղմնավորելու ընդունակությունը, նրա սեռական անդամն արդեն դառնում է ձգվելու ընդունակ (առաջ է գալիս «կանգնում»): տղան արդեն կարող է անդամն

անցկացնել կնոջ սեռական գործարանների մեջ
և հեշտասիրական բավականութիւնն ստանալ,
բայց տղայի սերմը դեռ բավականաչափ հասու-
նացած չի, վորպեսզի կարողանա բեղմնավորել
կնոջ ձվիկը: Նա «մարդ» (ամուսին) լինել ար-
դեն կարող է, բայց հայր լինել—դեռ չի կարող:
Ուստի խոսելով սեռական հասունության մասին,
չպետք է կարծել, վոր պատանին սեռական
կյանքի համար արդեն միանգամայն հասունա-
ցած է:

Աղջիկների սեռական հասունութիւնն ավե-
լի շուտ է տեղի ունենում, քան տղաներինը:
Այն տեղի յե ունենում որգանիզմի դեռ չամրա-
պնդված ժամանակ: Աղջիկն ընդունակ է դառնում
սեռական ակտ կատարելու և նույնիսկ բեղմնա-
վորվելու, բայց դեռ չի կարող մայր դառնալ ա-
ռանց իրեն և իր սերնդին վնաս պատճառելու:
Սակայն, պայմանների բազմազանությանը զու-
գընթաց, վորոնք մենք շոշափեցինք տղայի սեռա-
կան կյանքի մասին խոսելիս, այստեղ ևս բազ-
մաթիվ տատանումներ են պատահում: Սեռական
զարգացման հարցում ցեղն ու կլիմայական պայ-
մանները խոշոր նշանակութիւն ունին: Հետա-
դատութիւններ կատարողներից վոմանք հաղոր-
դում են, վոր տաք յերկրներում կարելի չէ տես-
նել 8—9 տարեկան ամուսնացած կանանց և

22—23 տարեկան աճապիսիներին, վոր արդեն տատ են դարձել:

Իսկ կնոջ սեռական հասունության ելութիւնն ի՞նչ է: Որգանիզմում տեղի ունեցող ընդհանուր փոփոխութիւնների մասին մենք արդեն խոսեցինք և նրանց պատճառները պարզեցինք. բոլորը կախված է կնոջ սեռական գեղձերի ներգատուցքից, այսինքն՝ ձվարաններից: Բայց իսկապես ի՞նչ է տեղի ունենում ձվարաններում:

Ձվարանները — յերկու փոքրիկ գործարաններ են, ընկած փորի ստորին մասում, արգանդի յերկու կողմից: Մինչև սեռական հասունացում տեղի ունենալը, դրանց չափերը շատ մեծ չեն լինում, բայց կնոջ զարգանալուն զուգընթաց, ձվարաններն զգալի մեծանում են: Դրանք հետզհետե ընդունակ են դառնում իրենց բնական նպատակները կատարելու. նրանց մեջ մարդու ձվի պարբերաբար հասունացում է սկսում: Ամեն մի կնոջ կյանքում այս կարևոր յերևույթի ելութիւնը հետևյալն է. արդեն իսկ աղջկա ծնված ուրից նրա ձվարաններում հազիվ նշմարելի կետեր — ապագա ձվերի բեղմնավորութիւններ են լինում: Այդ կետերը, ամբողջ որգանիզմի զարգանալուն զուգընթաց, աստիճանաբար զարգանում, փոքրիկ բջիջների տեսք են ստա-

նույն և միայն սեռական հասունության շրջանի մոտերքը վերջնականապես կազմավորվում են: Այդ ժամանակ ձվարանների մեջ բազմաթիվ պաշտպարկեր են լինում, վորոնք «գրաաֆյան բշտիկներ» են կոչվում, և ձուն նրանց մեջ է լողում: «Գրաաֆյան այդ բշտիկների» և, հետևապես, սաղմի ձվերի քանակը շատ մեծ է, հասած աղջկա ձվարաններում դրանցից 30—40 հազար հատ կարելի չէ հաշվել:

Սեռական հասունությունը տեղի ունենալու ժամանակից սկսած, ամեն ամիս, ժամանակի ճիշտ դադարներից (промежутки) հետո՝ — մոտավորապես 28 օրից հետո — տեղի չէ ունենում մի քանի, կամ առնվազն, մեկ ձվի հասունացում, ըստ վորում այդ ժամանակ գրաաֆյան բշտիկը պատռվում, հեղուկը նրա միջից դուրս է գալիս, և հասունացած ձուն արգանդի մեջ է ընկնում, ուր, տղամարդու սերմով բեղմնավորվելուց հետո, կարող է զարգանալ: Ձվարանում մարդու ձվի այս օրինակ հասունանալը, նրա յերևալն ու բեղմնավորվելու ընդունակությունը, աղջկա սեռական հասունության հիմքն են դառնում:

Կնոջ ձուն հասունանալու և ձվարանից դուրս գալու պրոցեսը՝ սեռական արտաքին գործարաններից արյունային արտահոսություններով է

ընթացակցվում, վորոնք կոչվում են «մենատրու-
 ացիա», դաշտան, լուսին կամ «ամսական մաք-
 րում»: Կնոջ՝ այս արտահոսություններն առաջին
 անգամ տեղի չեն ունենում սեռական հասունու-
 թյան հետ և սրա ամենաճիշտ նշանն են հանդի-
 սանում: Այնուհետև դաշտանները կրկնվում են
 ժամանակի կանոնավոր ընդմիջումներից հետո,
 մոտավորապես ամեն մի 28 օրից հետո, իսկ 45
 — 46 տարեկան հասակում իսպառ չքանում են:
 «Մենատրուացիա» բառը ծագում է լատինական
 «մենսիս» ամիս և «րուս» — հոսել բառերից, վոր
 ցույց է տալիս, թե այդ հոսումն ամեն ամիս
 կրկնվում է: Դաշտանի «մաքրում» նրա համար
 է կոչվում, վոր հին ժամանակներում հավատում
 էին, թե կնոջ որգանիզմի մեջ անմաքրություն-
 ներ են հավաքվում, վորոնցից նա այդ արտա-
 հոսությունների միջոցով է ազատվում: Շատ
 յերկրներում ու շատ ժողովուրդների մեջ դաշ-
 տանի արյունը համարվում էր (ղեռ այժմ էլ
 տեղ տեղ համարվում է) վոչ միայն անմաքուր,
 այլև՝ ֆուսական ու թունավոր: Հին հրյաների
 որենքով կինը դաշտանի ժամանակ անմաքուր էր
 համարվում, ուստի յոթն օր առանձին պետք է
 ապրեր: Յեթե այդ ժամանակ տղամարդը լոկ կը-
 նոջ անկողնին էր մոտենում, նա արդեն պըղծ-
 ված էր համարվում և լվացման պետք է լին-

թարկվեր: Իսկ յեթե նա այդ ժամանակ կնոջ հետ սեռական հարաբերություններ եր ունենում, յերկու ամուսիններն ել ծանր պատժի ենին յեն-
թարկվում:

Նույնիսկ հենց մինչև այժմ ել ժողովրդի խավար ու տգետ խավերի մեջ, տնգամ այսպես ասած՝ «կուլտուրական» յերկրներում, դաշտա-
նի վրա նայում են վորպես փասակար ու դժ-
բախտություններ բերող մի յերևույթի վրա: Ի-
տալիայում բազմաթիվ ավանդություններ ասում
են, վոր յեթե դաշտանի ժամանակ կինը խոտը
տրորի, այն կթառամի ու կշորանա, դաշտան ու-
նեցող կնոջ տեսած կաթը «կշաղվի— կկտրվի»
(մակարդվել), իսկ այդպիսի կնոջ մոտ քնող տղա-
մարդը մեջքացավով կտառապի: Պարսիկների մեջ
այն ամենը, ինչի վոր դաշտան ունեցող կինը
ձեռք ե տալիս, պղծված (հարամ) ե համարվում:
Ջինաստանի մի քանի վայրերում կինն իր դաշ-
տանի արյունն առանձին թղթի մեջ պետք ե հա-
վաքի, վորպեսզի այդ հետո այրվի: Միևնույն
ժամանակ գոյություն ունին նաև հակառակ հա-
վատալիքներ, թե դաշտանի արյունը կարող ե
դործածվել իբրև դեղորայքի նյութ՝ պաղագ-
րալի, կարմիր քաժու և ջղալին հիվանդություն-
ների ժամանակ: Գերմանական մի ավանդություն

ասուժ Ե՛ յեթե այդ արյունով աղտոտված շորը հրդեհի մեջ նետեն, հրդեհը կհանգչի:

Ի հարկե՛ նման ավանդությունների մեծ մասը վոչնչի վրա հիմնված չի, բայց նրանցից մի քանիսի մեջ վորոշիմաստ կա: Կնոջը մերձենալն արգելելու, նրան «պիղծ» հայտարարելու և այլ միջոցներով, մարդիկ կամեցել են դաշտանի ժամանակ կնոջ համար անհրաժեշտ հանգիստ պայմաններ ստեղծել, նրան աշխատանքից, սեռական հարաբերություններ ունենալու պարտավորություններից ազատել և այլն:

Իսկ ի՞նչ է կատարվում կնոջ սեռական ապարատի մեջ՝ դաշտանի ժամանակ: Ինչո՞վ են բացատրվում կանոնավոր այդ արտահոսությունները:

Կնոջ արգանդը ներսի կողմից այսպես ապած՝ «լորձաթաղանթով» է պատած: Բեղմնավորվելուց հետո կնոջ ձուռն այդ թաղանթին է ամրանում: Արգանդի լորձաթաղանթն ամեն ամիս արյունով լցվում է, այս դրության մեջ այդ թաղանթն ընդունակ է ձուռ ընդունելու և կերակրելու՝ ի հարկե, յեթե ձուռն բեղմնավորված է: Բայց չե՞ վոր բեղմնավորումը հազվադեպ է տեղի ունենում: Յե՛վ ահա, յեթե ձուռն բեղմնավորված չի յեղել, յեթե այն ուղղակի վոչնչանում է, այն ժամանակ տեղի յե ունենում

արգանդի լորձաթաղանթի քայքայում և միաժա-
մանակ՝ արյունահոսություններ: Հետևապես ար-
գանդի լորձաթաղանթից արյուն հոսելը, այսին-
քն՝ դաշտանը նշան և այն բանի, վոր հղիու-
թյուն տեղի չի ունեցել, լորձաթաղանթը քայ-
քայվում և, վորովհետև այս անգամ իրեն անե-
լիք չի գտնում:

Դաշտանի արյունն առանձին վոչնչով չի
տարբերվում սովորական արյունից, բացի այն,
վոր նրա մեջ, արյան հիմնական մասերից զատ
պարունակվում են նաև արգանդի ներթաղանթի
կտորտանք, լորձյուն և այլն:

Տեղի ունեցող ամսական արյունահոսություն-
ները միջին թվով 4-6 օր են տևում: Նրանց տե-
վողականությունը կախված է կնոջ ֆիզիկական
զարգացումից, ժառանգականությունից, կյանքի
կլիմայական, սոցիալական և այլ պայմաններից:
Ճիշտ այդպիսի տատանումների չել դաշտանի ժա-
մանակ արտահոսող արյան քանակն է զգալի չա-
փով յենթակա:

Կնոջ դաշտանները նրա ամբողջ սեռական
կյանքի ընթացքում (ընդմիջումներով՝ հղիու-
թյան ժամանակ կամ վորև հիվանդության հետե-
վանքով) շարունակվում են միջև 45-50 տարե-
կան դառնալը յերբ աստիճանական (կլիմակտե-
րիկ) շրջանն է թևակոխում: Այդ ժամանակ կի-

նը կորցնում ե բեղմնավորվելու, հետևապես, և
յերեխա ծնելու ընդունակութիւնը: Այդ ժամա-
նակ, բնականաբար, դադարում են և դաշտան-
ները:

Դաշտանները տեղի յեն ունենում, ձվարանի
գործունեյության հետ կապ ունենալով. յետե-
անդամահատության միջոցով ձվարանը հանվի,
դաշտաններ ալլես չեն լինի:

Գլուխ II

Սեռական հակում

Յերկու հիմնական բնագդ (հիմնական առ-
գիտակցական ձգտում) կա ամեն մի կենդանի
եյակի մեջ. ինքնապաշտպանության բնագդ և
ցեղը շարունակելու բնագդ: Գերմանացի մի բա-
նաստեղծ ասել ե՝ «ամբողջ աշխարհը կառա-
վարողը — սովն ու սերն են»: Կշտանալու, բաղցը
հագեցնելու ձգտումը, ինքնապաշտպանության
բնագդի արտահայտութիւնն ե, իսկ սերը — բաղ-
մանալու բնագդի, այսինքն՝ ցեղը շարունա-
կելու արտահայտութիւնը: Այս բնագդը սեռա-
կան գործունեյության միջոցով ե յերևան գա-
լիս, վորի դրդիչը — առանձին «սեռական» դգա-
ցողութիւնն ե: Ասողջ որդանիղմի մեջ այս ըգ-
դացողութիւնը՝ դեպի մյուս սեռի անձնավորու-

թշուհը հակուժ ունենալով և արտահայտվում է
Հակուժը, սկզբում մութ ու անորոշ, աստիճանա-
բար փոխվում և պարզ ձգտումի դեպի սեռա-
կան ակտ, վորը սեռական հասունությունը տե-
ղի ունենալուց հետո յե հնարավոր ու նպատա-
կահարմար դառնում է:

«Սեռական զգացողությունը» զուգավորման,
այսինքն՝ սեռական ակտ կատարելու դրդիչն է,
վորը յերեխա բեղմնավորելու, հետևապես, և
ցեղը շարունակելու անհրաժեշտ պայմանն է հան-
դիսանում: Բայց յեթե մենք նայելու լինենք մեր
շուրջը, կտեսնենք վոր ամենևին էլ միշտ յե-
րեխա աշխարհ բերելու համար չի, վոր մար-
դիկ սեռական հարաբերություններ են ունենում:
Շատ հաճախ և պատահում, վոր սեռական ակ-
տն ու նրա հետ կապված բավականությունն
ինքնին արդեն նպատակ են, իսկ յերեխա-
յի հարցը—վերջին տեղն է բռնում: Դեռ ավե-
լին, մարդիկ հաճախ սեռական կյանք են վար-
ում, տնտեսական կամ այլ պատճառներով գի-
տակցաբար չցանկանալով յերեխա ունենալ:
Բեղմնավորության դեմ ամեն տեսակի միջոցներ են
ձեռք առնում և, յեթե դրանք չեն ոգնում, վիժ-
ման ոգնությանը, այսինքն՝ կնոջ արգանդից բեղմ-
նավորված «պտուղն» արհեստական կերպով հա-
նելուն են դիմում: Կենդանիների անգիտակցա-

կան ձգտումը դեպի ցեղը շարունակելն ու դեպի սեռական ակտի հետ կապված բավականությունը միանում, մի բուն ույժ են դառնում, վոր արուն դեպի եզն ե քաշում ու ստիպում ենըրանց՝ միմյանց անձնատուր լինել:

Բայց մարդու մեջ այս բանն այլ կերպ ե արտահայտվում: Հասարակական պայմաններին զուգընթաց, վորոնց մեջ մարդն ապրում ե, ինչպես և մտավոր զարգացմանը զուգընթաց, վոր մարդուն անագին տարածությամբ բաժանում ե անասունից, մարդկանց բնական հակումները զանազան փոփոխությունների յեն յենթարկվում: Այս ազդեցություններն իրենց ճանաչել են տրվել նույն սեռական զգացողության նկատմամբ: Մինչդեռ անասունների սեռական հակումը սեռական գեղձերի հետ ե սերտ կապված, մարդու մեջ այս բանում խոշոր նշանակություն ունի գլխի ուղեղի գործունեյությունը, վորը նրա «հոգեկան» (այսինքն՝ ամբողջ հոգևոր կյանքի) հիմքն ե կազմում: Բազմանալու և զուգավորման ձգտումները մարդու նկատմամբ պետք ե զանազանել:

Յերբ մենք սեռական զգայության, կամ «հեշտասիրական զգայության» մասին ենք խոսում, չպետք ե կարծենք, վոր այդ նույնպիսի պարզորոշ զգայություն ե, ինչպես որինակ՝ «լըսելը», «տեսնելը», «հոտոտելը» և այլն: Դժվար

թե կարելի լինի յենթադրել, վոր առանձին, ուրիշ զգայություններէց ջուկ, «սեռական մի զգայություն» ել կա: Գիտնականներէ մեծ մասն այն կարծիքին է հակված, վոր հեշտասիրական զգայությունը — մաշկը շոշափելու ընդհանուր զգայության միայն մի մասն է: Զգայությունը մաշկի խտրողութիւն շատ մոտիկ ազգակցություն ունի է ինքն ել շատ ուժեղ խտրող է:

Բայց միևնույն ժամանակ հեշտասիրական զգայությունն անկասկած ցաւ զգալու հետ կապ ունի: Մենք գիտենք, վոր ամբողջ մարմնի մաշկի ու արտաքին լորձաթաղանթների մեջ զգացողության նյարդերի առանձին վերջավորություններ կան, վորոնք մեզ հնարավորություն են տալիս շոշափելիքի զգայությամբ ոգտվելու: Սեռական արտաքին գործարանների մեջ նյարդերի վերջավորությունները շատ նման են մաշկի մեջ գոյութիւն ունեցող զգայության նյարդերի վերջավորություններին, բայց սեռական ակտի ժամանակ, տղամարդու և կնոջ սեռական գործարանների հպման միջոցով այդ վերջավորությունների զրգիւն այն հեշտասիրական առանձին հաճելի զգայությունն է տալիս, վորի համար մարդիկ սեռական ակտին են ձգտում: Զուգավորման ժամանակ հեշտասիրական այդ զգայությունն ավելի ու ավելի յե սաստկանում

և, վերջապես լարվածության ծայր աստիճանին
 այսպես ստա՛ծ՝ «սեռական հաճույքին» (որգայմ)
 և հասնում, վորը տղամարդկանց համար սերմ-
 նահոսության հետ և կապված, իսկ կանանց հա-
 մար—լորձահոսության հետ՝ սեռական գործա-
 րանների գեղձերից: Դրանից հետո՝ սովորաբար
 թեթևություն ու հանգստություն և զգացվում:
 Իզուր չի, վոր գիտնականներից վոմանք սեռա-
 կան ակտը փռչտալու հետ են համեմատել. խրո-
 դոց զգալը և այնուհետև փռչտալուց հետո թե-
 թևությունը իսկապես մեծ նմանություն ունի
 սեռական ակտի ժամանակ փոփոխվող զգայու-
 թյան:

Արդ, սեռական ակտ կատարելու համար
 տղամարդուն ու կնոջը՝ մեկը դեպի մյուսին
 դրդող սեռական հակումը մարդկային բնության
 մեջ խորը և անկապտելիորեն արմատացած հիմ-
 նական ձգտումներից մեկն է: Սեռական հակու-
 մը, սեռական հասունությունից հետո յե մի-
 այն սեռական ակտին ձգտելու պարզ ու հըս-
 տակ ձև ընդունում: Յերեխաների մեջ, որինակ,
 մինչև այդ շրջանը բազմապիսի անորոշ ձգտում-
 ներ, մութ զգայություններ են նկատվում, վո-
 րոնք անտարուկույս կապ ունին սեռի մեջ առաջ
 յեկող զգայության հետ:

Տղան ու աղջիկն իրենց սեռական պահանջ-

ները կարող են բավարարել միայն սեռական հասունությունը տեղի ունենալուց հետո, և այն ելվոյ ամենևին մեկ անգամից, այլ այն ժամանակ միայն, յերբ նրանց վողջ որգանիզմը կամրապնդվի: Այստեղ մենք կարող ենք դիտել մարդու որգանիզմի բնույթի այն անհամապատասխանությունը, վորով սեռական հակումների սկզբնավորություններն առաջ են գալիս դեռ մանկական վաղ հասակում, իսկ սեռական հասունությունը՝ շատ տարիներ հետո յե տեղի ունենում:

Ֆերեխաների սեռական զգայությունները

Առաջ կարծում եյին, թե մինչև կատարյալ հասունությունը սեռական զգայությունները գրեթե իրենց ճանաչել չեյին տալիս: Բայց, ավստրիացի գիտնական Ֆրեյդի կատարած վերջին տարիների հետազոտությունները հակառակն են ապացուցել:

Վողջ կյանքի հիմքը — եվույցուցիան է, այսինքն՝ աստիճանական փոփոխությունը: Բնությունը թռիչքներ չունի — ուստի դժվար է կարծել, թե յերեխաների մեջ սեռական վոյ մի զգայություն դեռ չի յեղել, և վոր սեռական զգայությունը՝ սեռական հասունության շրջանում հանկարծ ու անսպասելի կերպով առաջ գար:

Ըստ Ֆրեյդի ուսմունքի, սեռական բնագ-

դը, բառի բուն իմաստով, շատ վաղ, մանկական ամենավաղ հասակում ե առաջ գալիս: Անգամ դատողություն չունեցող ծծի յերեխան արդեն վորոշ տեսակի սեռական զգայություն ունի, այն բավականությունը, վոր նա զգում ե մոր ծիծը ծծելիս, սեռական զգացողության հետ կապ ունի: Սեռական զգացողությունները դեռ մանկության առաջին որերումն են առաջ գալիս, իսկ հետագայում միայն խորանում և մարդու հասակին զուգընթաց յերևան են գալիս զանազան ձևերով:

Սեռական զգացողություններ ընդունելու առանձին ընդունակ մասերը («սիրածին գոտիները») յերեխայի մարմնի մեջ տարբերվում են. ամենից շատ սիրածին տեղերին շրթունքներն են պատկանում (ուստի ծծելը յերեխային բավականություն ե պատճառում, յեթե անգամ կերակուր ընդունելու հետ կապ չունի այն): Յերեխայները հաճույքով ծծում են սեպհական մատները, պտուկներ, խաղալիքներ և այլն: Ծծող յերեխայների մեջ, իբրև բավականության արտահայտություն, նկատվում ե վոչ միայն դեմքի կարմրությունը, այլև՝ իրանը ձգվում ե, ազդրերը սեղմվում են, այսինքն՝ տեղի յեն ունենում այնպիսի շարժողություններ, վորոնք պարզորեն սեռական բնույթ են կրում: Հասակավորների մեջ շրթունք-

ների այս սիրածնությունը պահպանվում և համ-
բույրների հակում ունենալու ձև ե ընդունում: Համ-
բույրի նման ինչ վոր բան կա գրեթե բոլոր
կենդանիների մեջ. արուններն ու եգերն իրա-
րից հոտ քաշելիս, իրար սեռական գործարաններ
են լիզում: Աղափսիներն, որինակ, գրեթե համ-
բուրվում են, իրար հետ կտուց-կտցի տալով:
Նույնպիսի սիրածին գոտի յել հետանցքի բոլոր-
տիքն է: Փրեյդը, համաձայն իր կատարած դի-
տողությունների, հաստատում է, վոր նույնիսկ
արտաթորման ակտը յերեխային ստիպում է
սեռական բավականություն վերապրել:

Սկզբում յերեխան այսպես ասած՝ ավտո-
երոտիզմի շրջան է վերապրում, յերբ իր ձեռ-
քերը սեպհական մարմնին դիպչելիս բավականու-
թյուն է զգում: Հետագայում սեռական բնազդը
փոխվում է դեպի ուրիշ, սկզբում յերեխային
մոտիկ անձ — ծնողներից, դաստիարակներից, մո-
տիկ ընկերներից մեկին, (նույնիսկ յերեխային
համասեռ մարդու) և այլն: Բայց Փրեյդի կար-
ծիքով, այդ հասակում դեպի մերձավոր ազգա-
կիցն ուղղված սեռական ձգտումներ են հաճախ
պատահում: Ըստ նրա դիտողությունների, աղ-
ջըկա սեռական ձգտումը սովորաբար դեպի հայրն
է լինում, իսկ տղայինը — դեպի մայրը, արդեն
դեպի ուրիշ սեռի անձ: Այս տեսակետից ման-

կապան վաղաժամ շրջանի սեռական բնագիւն արդեն հասակավոր մարդկանց սեռական հակուժին է մոտենում:

Այս կամ այն սեռին պատկանելը յերեխաների հոգեկան կյանքի մեջ ավելի վաղ է արտահայտվում, քան սեռական գործարանների զարգացումը և գիտակցական սեռական բնագիւն առաջացումը: Դեռ բոլորովին փոքրիկ տղաներն ու աղջիկներն իրենց հոգեկան կառուցվածքով արդեն վորոշ բաներով իրարից տարբերվում են: Աղջիկների մեջ յերևան է գալիս զուրկելու տենչ, դուր գալու, տղաներով հրապուրվելու ցանկություն և այլն: Փոքրիկ աղջիկների մեջ առանձնապես բնորոշ է սերը և հոգատար խնամքը դեպի փոքրիկ տիկնիկները: Սրանով դեռ սաղմնային դրությամբ արտահայտվում է այն, ինչ վոր հետագայում մայրական սեր պետք է դառնա, թեև զուտ բնագիւնական, դեպի սեռական զգացողությունն ուղղակի ակնարկ չունեցող արտահայտություն է այդ: Իր հերթին տղաների մեջ ցանկություն է առաջ գալիս աղջիկների աչքում հերոս յերևալ, ֆիզիքական ուժով պարծենալ և այլն:

Սեռական հակուժն իր զարգացման ամենասկզբնական շրջանում դեռ բոլորովին անորոշ բնույթ է կրում, — կիսով չափ անգիտակցական ու անհասկանալի ժի զգացողություն է այդ, վորը

տղային՝ դեպի իրեն առանձնապես հրապուրիչ
յերևացող իգական սեռն է քաշուժ: Առաջ են
գալիս ահամա «կանգնուժներ» (սեռական ան-
դամի ձգվածություն), վորը տղայի ուշադրու-
թյունն իր վրա յե դարձնում և ստիպում է նը-
րան սեռական կյանքի մասին մտածել: Հետա-
գայում արդեն տղան կարող է սիրահարվել կը-
նոջ վրա և նրան տեսնելիս կամ նրա մասին մի-
այն մտածելիս «կանգնում» առաջացնել: Միա-
ժամանակ նա անորոշ ցանկություն է զգում,
վորը զուգավորման վրա թեև այնպես չի յել
կենտրոնացած, ինչպես հասակավոր տղամար-
դունն է, բայց և այնպես սաստիկ զգայնության
նշան է կրում:

Յերկար ժամանակ այս բոլորը մնում են՝
անորոշ ցանկությունների, տենչանքների և ձրգ-
տուժների շրջանում առանց բավարարման: Յերե-
վակայությունը սեռական բնագավառի հետ կապ
ունեցող ամեն տեսակի պատկերներ է գծագրում:
Այն կանայք, վորոնց ուղղված է սեռական ձրգ-
տումը, նրանք յերագում յերևում են, գրգիռ են
առաջ բերում, վորին հաջորդում է «կանգնումը»:

Սովորաբար յերագում, յերբ գիտակցու-
թյունը լռում է, և հեշտասիրական ամեն տեսա-
կի պատկերների գործունեյությունն ավելի ու-
ժեղ է, քան արթուն ժամանակ, սեռական գրը-

գիւր, վոր կապ ունի «կանգնութեան» հետ, սերմնահոսութեան - չերազախաբությունների յե հասցնում: Բայց արթուն ժամանակ ել, սեռական ցանկությունից առաջ յեկած զրգիւրը կարող ե այն ամառիճան ուժեղ լինել, վոր տղան ձեռքերով զրգուի իր սեռական գործարանները, վորպեսզի իրեն հաճելի զգացողություն պատճառի: Բայց տղամարդու սեռական ընդունակությունը նրա սեռական հասունությունից հետո չե միայն կատարելապես զարգանում: Միջին հաշվով, տղամարդու սեռական ուժը, այսինքն՝ սեռական հարաբերություններ ունենալու ընդունակությունը 25-ից, մինչև 40 տարեկան հասասակը բարձր մակարդակի վրա յե գտնվում: 40 տարեկանից սկսած սեռական ուժն սկսում ե հետըզհետե թուլանալ և 70 տարու մոտերքը, իսկ հաճախ ել առաջ, բոլորովին մարում ե:

Ինչ վերաբերում ե աղջիկներին, սեռական բնագոյի հետ կապ ունեցող նրանց առաջին վերապրումները նույնպես մութ ու անորոշ են: Սեռական հասունությունը թեակոխող աղջկա հոգեկան աշխարհը շատ ե բարդ ու հեղհեղուկ. նրա գիտակցութեան խորքերում ինչ վոր անորոշ ցանկություններ են ծագում, նրա ամբողջ հոգեկան աշխարհում խիստ հեղաշրջում ե տեղի ունենում: Հաճախ տրամադրութեան խիստ փո-

վոխուլթյուններ են նկատվում. առաջ՝ ուրախ, անհոգ, անկեղծ, ասող-խոսողը, կիս դառնալով՝ դառնում է մտածկոտ, բարվոք է համարում ժամանակն անցկացնել մենակության ու մտած-
 ւունքների մեջ: Աղջկա ամենից շատ ազդվելու, ամեն տեսակի ազդեցություններին հեշտությամբ չենթարկվելու հասակն է այդ: Այդ ժամանակ ձևավորվում է կնոջ վոչ միայն ֆիզիկական տի-
 պարը, այլև՝ զգալի չափով նրա ներքին աշխար-
 հը: Անգիտակցական և անորոշ ձգտումներից աստիճանաբար սեռական պարզ հակում է զար-
 գանում դեպի ուրիշ սեռի եյակ—դեպի տղա-
 մարդը:

Սակայն, — ինչպես մենք խոսեցինք նաև տղաների մասին, — սեռական հասունությունը թե-
 վականիսած աղջկան չի կարելի միանգամից ըն-
 դունակ համարել նորմալ սեռական կյանք վա-
 րելու: Ճիշտ է՝ աղջիկը սեռական հակում ար-
 դեն զգում է, սեռական ակտ կատարել նա ար-
 դեն կարող է, նույնիսկ կարող է և հղիանալ —
 բայց հասցնել, ծնել ու միանգամայն առողջ յե-
 րեխա կերակրել — նա դեռ անկարող է: Նրա որ-
 գանիզվը դեռ բավականաչափ ամրացած չի:

Մինչև այժմ մենք սեռական զարգացման նոր-
 մալ, այսինքն՝ սովորական և ճիշտ ընթացքի մա-
 սին խոսեցինք: Մենք տեսանք, վոր չնայած, տը-

դայի կամ աղջկա որգանիզմներն ակնհայտ կերպով թևակոխել են սեռական հասունության շրջանը, բժշկական տեսակետից, սեռական հարաբերություններ նրանց դեռ չեն կարող թույլատրվել: Սակայն հաճախ պատահում է, վոր սեռական զարգացումն ավելի առաջ է տեղի ունենում, քան տեղի պետք է ունենա նորմալ կերպով և պատահումն սեռական զուգավորման է մղում այն ժամանակ, յերբ նրա որգանիզմն իր զարգացումն ավարտելուց դեռ հեռու յե, քան սովորաբար լինում է այդ:

Սեռական զգացողության վաղաժամ առաջացումը

Վորո՞նք են վաղաժամ սեռական զգացողություն առաջ գալու պատճառները:

Վաղաժամ սեռական զգացողության մեջ շատ մեծ դեր են խաղում ժառանգականությունն ու բնածին տրամադրությունը: Կան յերեխաներ, վորոնք անկախ արտաքին այն պայմաններից, վորոնց մեջ իրենք դրված են, վաղ են սկսում սեռական զգացողություններ ուժեղ կերպով վերապրել: Կան ամբողջ ընտանիքներ, ուր յերեխաները վաղ են հասունանում, հայտնաբերելով սեռական միանգամայն պարզ հակում: Սրա պատճառը շատ անգամ ժառանգական ազդեցությունն է լինում: Զղային ու հոգեկան հիվան-

դուժյուլններով, արկոհողականությամբ ու նման
այլ ձգձգվող և ծանր հիվանդություններով տա-
ռապող ծնողների յերեխաները հաճախ ժառան-
գուժ են չափազանց անկայուն նյարդային հա-
մակարգություն: Այս բանը կարող է պատճառ
դառնալ ժամանակից առաջ սեռական հասուն-
նություն առաջ գալուն, ըստ վորում, այդպիսի
դեպքերում սեռական զգացողությունը ծայր աս-
տիճան լարվածության կարող է հասնել:

Մենք տեսանք, վոր ցեղական և կլիմայա-
կան պայմանները սեռական կյանքի վրա նույն-
պես առանց անզեցության չեն մնում: Հրյաների
մեջ սեռական հասունության նշաններն ավելի
շուտ են յերևան գալիս, քան մյուս ցեղերի ներ-
կայացուցիչների մեջ: Հարավային յերկիրների
բնակիչներն ավելի շուտ են սեռական կյանք ըս-
կսում, քան հեռավոր հյուսիսիներ:

Պակաս նշանակություն չունին նաև հասա-
րակական պայմանները, վորոնց մեջ յերեխան
զարգանում է: Կանգ առնենք գյուղի ու քաղա-
քի կյանքի վրա: Աղջիկների սեռական հասունու-
թյունը գյուղում ավելի ուշ է սկսվում, քան քա-
ղաքում—առաջին գաշտաններն ուշ են յերևում:
Ամենից առաջ այստեղ անդրադառնում են գյու-
ղական կյանքի և աշխատանքի ծանր պայման-
ները՝ որգանիզմը կմախքացնող, ուժից վեր աշ-

խատանքի ազդեցութիւնը և նյութական ամեն տեսակ դժբախտութիւններն ու զրկանքներն ազդեցութիւնը: Մյուս կողմից՝ կատաղի ու յեռուն կյանք վարող քաղաքը լի յե շատ գալթակղութիւններով՝ յերեխան չի պաշտպանում իրեն փշացնող ամեն տեսակի ազդեցութիւններից՝ գալթակղութիւններից, անհարմար գրքերից, նկարներից, թատրոններից, «լուսավոր ընկերներից» և այլն: Այս բոլորն անդրադառնում են սեռական հակում առաջ գալու ժամանակի վրա:

Այս տեսակետից շատ հաճախ ազդում են նաև ընտանեկան շրջապատը, վորի մեջ յերեխաները դաստիարակվում են: Որինակ, վերցնենք ունևոր ընտանիքը—այստեղ՝ սեռական վաղահասութիւնը նպաստող բազմաթիւ պատճառներ կան: Տաք վառած բնակարանները, չափազանց փափուկ և տաք անկողինները, հաճախակի տաք վաննաները,—այս բոլորը սեռական զգայութիւն վրա գրգռիչ կերպով են ազդում: Չափազանց առատ ու սննդարար կերակուրը, մեծ բանակի միսը, մեծ բանակութեամբ բազմապիսի քաղցրավենիքը, յերեխաների կողմից թեյ և սուրճ գործածելը—այս բոլորը նպաստում են սեռական գրգիռ առաջ գալուն և սաստկացնում են այն: Յերեխայի շարժվածքները խանգարող և նը-

րա սեռական գործարանների վրա ճնշում գործ
դնող զգեստը գրգռում է գործարանները և յեր-
բեմն սեռական գրգիռ առաջանալու պատճառ
դառնում: Որինակ, շնորհիվ վարտիքի, գլխավո-
րապես սեռական գործարանների մասում, խոնավ
տաքություն է զարգանում, միգելու ժամանակ
սեռական անդամը դուրս հանելը նույնպես վորոշ
գրգիռով է ընթացակցվում, վորը ձեռնաշարժու-
թյան (ոնանիզմ) պատճառ կարող է դառնալ:
Պարապմունքների ու հանգստի սխալ բաշխումն
իր հերթին՝ կարող է վաղաժամ սեռական զգա-
յություն առաջ գալու աղբյուր դառնալ:

Նստակյաց կյանքը, վոր յերեխաները հա-
ճախ վարում են ինտելիգենտ ընտանիքներում,
շարժողությունների բացակայությունը սեռական
անդամների մասում արյունը կանգնեցնում և,
հետևապես չափազանց վաղաժամ սեռական հա-
կումի զարգացում է առաջ բերում:

Ծծմայրերը յերբեմն փորձում են յերե-
խաներին հանգստացնել, նրանց մարմնի մի
քանի մասերը, վորոնց թվում և սեռական գոր-
ծարանները խտրտելու միջոցով: Այս բոլորը յե-
րեխայի վրա նույն ուղղությամբ է ազդում:

Վերջապես, սեռական զգայության վաղա-
ժամ զարգանալու վրա ազդում են նաև զանա-
զան հիվանդություններ, վորոնց յենթարկված

են յերեխաները: Արյան պակասությունը, գեղ-
ձախտը, անգլխական հիվանդությունը — այս բո-
լորը յերեխաների մեջ առաջ են բերում թուլու-
թյուն ու նյարդային համակարգության անկա-
յունություն և հետևապես, սեռական ձգտումներն
ուժեղ կերպով զարգանալու պայմաններ կարող
են ստեղծել: Այս թվին են պատկանում նաև
տեղական բնույթի հիվանդությունները — սեռա-
կան որգանների մասերում բոլր բերող բծերը
առանձին փոքրիկ ճիճուները (փորի կլոր ճիճու),
վորոնք յերեխաների սեռական գործարանների
վրա յեն սողում (սովորաբար աղջիկների մեջ ե-
լինում այդ), նրանց գրգռում և պայմանավո-
րում են վաղաժամ սեռական ցանկությունը:

Բացի յերեխայի ֆիզիկական, այսինքն՝
մարմնական զարգացմանը վերաբերող վերոհիշ-
յալ բոլոր ազդեցություններից, իրենց ազդեցու-
թյունն են թողնում նաև բազմապիսի «պսիխիկա-
կան», այսինքն՝ հոգեկան մոմենտները, վորոնց
ազդեցությունից յերեխան դժվար թե ազատվել
կարողանա: Այն պայմանները, վորոնց մեջ յե-
րեխաներն ապրում են, բնակչության վոր շրջ-
անում, վոր դասի մեջ ել ուզեք, կարծեք, այն-
պես են դասավորված, վոր նրանց մեջ սեռական
կյանքի ծարավը վաղ առաջ բերեն:

Վերցնենք, որինակ, բնակչության չբավոր

դասակարգը: Չքավորների մեծ մասը նեղլիկ
խցիկներում ու տախտերի վրա յեն պատսպար-
վում: Իր ճանաչողության առաջին որերից յե-
րեխան այստեղ այնպիսի տեսարաններ է տես-
նում, վորոնք նրա մեջ ակամայից սեռական
ձգտում են առաջ բերում: Սովորաբար ընտա-
նիքի անդամները միասին են քնում: Բնակարա-
նային պայմանների պատճառով սեռերն իրարից
ջուկ պահել հնարավոր չի: Տղաներն աղջիկների
հետ նույն մահճակալի վրա յեն քնում, և այս-
պիսով անբնական վաղաժամ սեռական զգայու-
թյունն առաջ գալու պայմանները պատրաստ են:

Բայց ունևոր ընտանիքներում ել յերեխան
շարունակ ստիպված է լսել յերկիմաստ խոսակ-
ցություններ, վորոնք նրա հետաքրքրությունը
վառում, նրան ստիպում են անհասկանալի շատ
յերևույթների լուծումներ վորոնել: Հասակավոր-
ները չեն քաշվում յերեխաների մոտ սեռերի
միջև յեղած հարաբերությունների մասին խոսե-
լուց, սխալ կերպով կարծելով, թե յերեխան
վռչինչ չի ըմբռնում: Յերեխային ցույց տված
ամբողջ խնամքը նրա հետաքրքրությունն է բոր-
բոքում: Սեռական գործարաններին կրկնակի
ուշադրություն դարձնելը, սրանք անվերջ ուրի-
շի աչքից ծածկելը — այս բոլորը յերեխայի հոգու
մեջ այն պատկերացումն են մտցնում, վոր սե-

ռական որգանները մարդու կյանքի մէջ ինչ վոր
առանձին, խորհրդավոր դեր են խաղում:

Թատրոնների, պատկերների ու գրականու-
թյան ազդեցութիւնների վրա մենք արդեն
կանգ առել ենք:

Բոլոր ասածներից յերևում է, վոր վաղա-
ժամ սեռական զգայութիւնն առաջ գալու պատ-
ճառները շատ են, և նրանց մեծ մասը կյանքի
հասարակական ամբողջ կառուցվածքի մէջ է խորը
կերպով արմատացած: Սեռական հակումի վերո-
հիշյալ իսկ վաղաժամ զարգացումն է պատճառ
դառնում, վոր յերիտասարդներն իրենց սեռա-
կան կյանքը վաղաժամ են սկսում:

Գլուխ III

Վաղաժամ սեռական կյանք

Որգանիզմի սեռական հասունացումն, ինչ-
պես ասված է վերևում, միջին թվով սկսվում է
տղաներինը՝ 14—16, իսկ աղջիկներինը՝ 13—15
տարեկան հասակում: Մենք արդեն տեսանք,
վոր այս հասունացումն ամենևին էլ չի նշանա-
կում անհապաղ սեռական հարստերութիւններ
սկսելու կատարյալ հնարավորութիւն. հասունա-
ցումն այս շրջանում միայն սկսվում է, իսկ
վերջանում է տղամարդկանց համար 25, կանանց
համար՝ մոտավորապես 21—22 տարու մոտեր-

քը: Այս իսկ տարիներում ել պետք էր, վոր նոր-
մալ կերպով սեռական կյանք սկսվեր: Բայց սո-
վորաբար զգալի չափով այն շուտ ե սկսում: Մեր
որերում դժվար թե կարելի լինի գտնել 17—18
տարեկան մի յերիտասարդ, վորն արդեն սեռա-
կան ակտ կատարած չլինի: Աղջիկները նույն-
պես, համեմատաբար, վաղ են ծանոթանում սե-
ռական կյանքին: Սեռական կյանքը, ցավոք սրը-
տի, շատ ավելի վաղ ե սկսվում, քան չամրա-
ցած որգանիզմն ընդունակ ե դառնում կյանք
տալու ուրիշ առողջ եյակի և, ընդհանրապես,
առանց իրեն փաս պատճառելու սեռական ակ-
տի հետ կապ ունեցող ցնցումները տանելուն:

Իսկ թե արդի յերիտասարդութունը յե՞րբ
ե սկսում սեռական կյանքը, այս ուղղությամբ,
կատարված են յեղել մի քանի հետազոտություն-
ներ: Յերիտասարդներին անոնիմ (առանց ստորա-
գրության) անկետաներ են բաժանել, վորոնց, վե-
րադարձնելուց հետո, ստացված տեղեկություն-
ների ընդհանուր հաշվարկում են կատարել: Բա-
նից դուրս ե գալիս, վոր սեռական կյանքը շատ
հաճախ նույնիսկ ավելի շուտ ե սկսվում, քան
սովորաբար մենք կարծում ենք: Որինակ, վերց-
նենք յերիտասարդ տղամարդկանց 1914 թ. Մոսկ-
վայի ուսանողության մեջ կատարած անկե-
տայի տվյալների համաձայն) տղաների 11,9⁰/₀

սեռական կյանքն սկսած են յեղել մինչև 13 տարեկան հասակը, այսինքն՝ այնպիսի հասակում, յերբ սեռական հարաբերությունների վորևե նորմալության մասին խոսք անգամ լինել չի կարող: 14 — 16 տարեկան հասակում սեռական կյանք սկսած են յեղել 39,2⁰/₀: Այսպիսով՝ 16 տարեկան ուսանողների կեսից ավելին սեռական կյանքով արդեն ապրած են յեղել: Մնացած 48,9⁰/₀-ը՝ արդեն 16 տարեկանից հետո չեն սեռական հարաբերություններ սկսած յեղել: Բայց նրանց մեջ ել, բնականաբար, յեղել են շատ յերիտասարդներ, վորոնք սեռական կյանքն սկսած են յեղել 17 — 18 տարեկան հասակում, — այնպիսի հասակում, յերբ, իհարկե, չի կարող այնպես անբնական համարվել, ինչպես 12 — 13 տարեկան հասակում զուգավորվելն է, բայց յերբ համենայն դեպս, սեռական հարաբերությունները վաղաժամ են համարվում: Միևնույն ժամանակ չպետք է մոռանալ նաև բոլոր հասակներում մեծ թվով ձեռնաշարժությամբ պարապողներին, վորոնց նույնպես պետք է համարեն սեռական կյանքն սկսածներ:

Ինչ վերաբերում է կանանց, նրանք, ընդհանրապես, սեռական կյանքն ավելի ուշ են սկսում, քան տղամարդիկ: Այստեղ թե՛ առարկայական և թե՛ անձնական բնույթ կրող շատ

պատճառներ կան: Սեռական կյանքը բոլորովին
չճանաչած մեծ թվով աղջիկներից զատ, կանան-
ցից շատերն զգալի չափով ուշ հասակում են
սկսել այն: Կանայք սեռական կյանքն ամենից
շատ 16—22 տարեկան հասակում են սկսում:
Այստեղ ևս, ինչպես տեսնում ենք, 16—17—18
տարեկան հասակում սեռական կյանքին ծանո-
թացած կինն ամենևին բացառություն չի կազ-
մում: Իսկ սեռական կյանքի համար այս հասա-
կը նորմալ չի կարելի անվանել:

Ի՞նչ փաստ ունեն սեռական վաղաժամ հա-
րաբերությունները: Նրանց յերկու տեսակի փա-
սի մասին մենք արդեն խոսեցինք, — թե վաղա-
ժամ զուգավորում սկսող իսկ մարդու որգանիդ-
մի և թե գալիք հնարավոր սերնդի համար:

Վորպեսզի հասկանանք վաղաժամ սեռական
հարաբերությունների փաստակար ազդեցությունն
որգանիդմի վրա, պետք է սեռական ակտի մա-
սին ևս մի բան հիշատակել: Սեռական գրգիռը
չի սահմանափակվում միայն սեռական գործա-
րաններով ու նյարդային համակարգության այն
մասերով, վորոնք նրանց գործունեությունն են
վարում: Սեռական գրգիռը՝ արյունատար անոթ-
ների ամբողջ համակարգությանն է հաղորդվում:
Տղամարդու սեռական գործարանի կանգնումն ա-
ռաջ է գալիս՝ գործարանն արյունով լցվելուց,

արյան աշտպիսի մակընթացութիւն տեղի յե ունենում նաեւ կնոջ սեռական գործարաններում: Մաշկի անոթները լայնանում են, սեռական գրգիռի ժամանակ յերեսը կարմրում է, աչքերը նուրբացնում լցվում են արյունով: Սիրտն ուժգին բաբախում է, սրա աշխատանքն ուժեղ թափով է ընթանում: Ուղեղի մեջ արյան ուժեղ մակընթացութիւն է առաջ գալիս, վորի հետեւանքով դատողութիւնը մթազնում է, իսկ սեռական հաճուլքի—որգազմի (սեռական զգացողութիւն ծայրահեղ լարվածութիւն) մոմենտներում նույն իսկ մի ակնթարթ տեղի յե ունենում գիտակցութիւն կորուստ: Կան մարդիկ, վոր այդ ժամանակ ծանր են շնչում, հեվում են, ուրիշներին--շնչափողերի մկանները ցնցւածով են բռնվում ու դուրս են թռչում ձայնարկութիւններ: Նյարդային համակարգութիւնը ցնցվում է, շարժումներն ու զգացողութիւններն անկանոն են դառնում, ձեռքերի ու վոտքերի ջղաձգութիւններ, նույնիսկ ցնցումներ են նկատվում:

Մենք տեսնում ենք, վոր սեռական հափըշտակութիւն մոմենտում գրգիռը հսկայական թափով բռնում է վողջ որգանիզմը: Մարդու բոլոր գործարաններն ու նյարդային համակարգութիւնը խիստ ցնցումների յեն յենթարկվում: Սեռական ակտը վերջանալուց հետո որգանիզմը

հետզհետե հանգստանում է, բայց սեռական
ակտը նյարդային համակարգության վրա առ ան-
հապեա ուժեղ կերպով է ազդում: Մեծ քանա-
կությամբ նյարդային ուժ է ծախսվում, վորը յերե-
վում է սեռական ակտից հետո տեղի ունեցող
հոգնածությունից ու քնկոտությունից: Ամբողջով
մարդկանց մեջ արտահայտությունն ավելի քիչ
է, բայց նյարդային համակարգությունը քայ-
քայված ու ջղագար մարդկանց մեջ այդ հոգնա-
ծությունը խիստ նկատելի յէ. ինչպես յերևում
է, զուգավորումը քայքայում է նրանց նյարդա-
յին ուժերի վերջին մնացորդները:

Հասկանալի յէ, վոր միանգամայն հաստա-
տուն և ամբապնդված որդանիզմի տեր մարդու
համար այս բոլորը կարող է անվտանգ անցնել:
Հասակավոր ու միանգամայն ամբապնդված մար-
դու համար իրեն սեռական ուժին չելք գտնելու
ցանկությունը, սեռական ակտի մեջ է թեթևու-
թյուն գտնում. դրանից հետո նրանց մեջ (իհար-
կե, յեթե չեն յեղել քայքայիչ սանձարձակու-
թյուններ) հաճելի հանգստություն է տեղի ու-
նենում: Բայց մատաղ, չամբապնդված, չզար-
գացած որդանիզմը չափազանց վաղաժամ սեռա-
կան հարաբերություններին շատ շուտ կարող է
քայքայել ու թուլացնել իրեն:

Սեռական հարաբերությունները վաղ հա-

սակուժմ անշուշտ ցանկալի չեն նաև հետևյալ
 նկատառումներով: Մարդու կյանքի մեջ սեռա-
 կան հակուժին խոշոր տեղ է տրված. նա մեր
 ամբողջ գոյության վրա իր կնիքն է դնում:
 Մարդը շարունակ կռվում է իր սեռական հա-
 կումների դեմ, ձգտելով իր կամքին հնազանդեց-
 նել և կազմակերպված հունի մեջ դնել այն:
 Բայց կյանքի փորձառություն, տոկունություն
 ու բնավորության հաստատություն չունեցող յե-
 րիտասարդն ամեն անգամ այդ անելու հնարա-
 վորություն չունի: Հենց վոր սնձնատուր է լի-
 նում սեռական բռնկումներին, նա ավելի ու ա-
 վելի յե տարվում իր սեռական ապրումներով,
 յերբեմն նույնիսկ կորցնելով նրանց վրա և իր
 վրա իշխելու ընդունակությունը: Ապացուցված
 է, վոր մարդ սեռական կյանքով վորքան շատ է
 ապրում, այնքան ավելի լե ձգտում, ընտելանում
 այդ կյանքին: Այսպիսով վաղ հասակում ամուս-
 նացած մարդիկ, չերբ սեռական հարաբերու-
 թյունները նրանց մատչելի լեն, ի չարն են
 գործ դնում այն, և սանձարձակություններին
 այն տատիճան հեշտությամբ են յենթարկվում,
 վոր իրենց որդանիզմը կատարյալ քայքայման
 են հասցնում: Սեռական սանձարձակություննե-
 րը, վոր այս բնագավառում ի չարն են գործ
 դրվում, վնասակար կերպով են անդրադառնում

նաև առողջ որդանիզմի վրա, իսկ մաստաղ, չամ-
րացած որդանիզմները սանձարձակություններից
եւ ավելի խիստ կերպով են քայքայվում: Սեռա-
կան հարաբերությունների հաճախակի կրկնու-
թյունը թուլացնում է թե՛ մարդու սեռական ու-
ժը և թե՛, ընդհանրապես, քայքայում է նրա
նյարդային համակարգությունը:

Սեռական հարաբերությունների մի ուրիշ
փաստի վրա ևս պետք է կանգ առնել — սերնդի
վրա սրանց փաստակար ազդեցության վրա: Մենք
գիտենք, վոր ծնողների մի շարք հատկություն-
ներ ժառանգաբար հաղորդվում են զավակներին:
Վորպեսզի սերունդն առողջ լինի, անհրաժեշտ է
վոր ծնողներն առողջ լինին և փոխադարձաբար
լրացնեն միմյանց բնական պակասությունները:
Մենք տեսանք, վոր սովի տարիներում թույլ,
քայքայված յերեխաներ ելին ծնվում, շատ հա-
ճախ ապրելու անընդունակ, յեղունկներից զուրկ
և այլն. — այդ բանը բացատրվում էր յերկարատև
բաղցից առաջացած՝ ծնողների ծայր աստիճան
քայքայվածությունով: Այդպիսի թույլ ու հի-
վանդոտ յերեխաներ ել ծնվում են վորևէ հի-
վանդությունից քայքայված ծնողներից: Յեթե
մոտիկ ազգականները, — որինակ քույր ու յեղ-
բայր — իրար հետ ամուսնանում են, նրանց ժա-
ռանգական պակասությունները, յեթե կարելի

յե այսպէս արտահայտվել, փոխանակ ուրիշի առողջ արշան հետ լուծվելու, ավելի ևս մեծանում են, և նրանց յերեխաները ծնվում են այլասերման, այսինքն՝ մարդկային ցեղը վատացնող նշաններով:

Վաղ ամուսնանալու ժամանակ իրենք, զուգ մատաղ որգանիդմները դեռ ձևավորված, իրենց զարգացումն ավարտած չեն լինում, ուստի նրանցից առողջ և կենսունակ սերունդ սպասել չի կարելի: Բացի այդ, հղիությունն ու յերեխայի ծնունդը յերիտասարդ մոր թույլ որգանիդմի վրա չափազանց ծանր կերպով են անդրադառնում: Որգանիդմի ուժերը դեռ այն կառուցելու և ամրապնդելու համար պիտի գնան, իսկ այդ ժամանակ նրա արգանդում առաջ եգալիս փոքրիկ եյակ, վորն իր զարգացման համար նույնպէս ուժեր ե պահանջում: Ի հարկե, հետևանքն այն ե լինում, վոր տուժում են թե մայրը և թե յերեխան: Յերեխան ծնվում ե թույլ և ապրելու սակավունակ, իսկ յեթե վաղաժամ ամուսնությունները կրկնվում են սխտեմատիքաբար, սերնդե սերունդ, ապա այդ բանը իսկական այլասերման կարող ե հասցնել: Ծննդաբերությունները նույնպէս հաճախ մեծ դժվարությունների հետ են կապված և խորը հետքեր

են թողնում մոր սեռական գործարանների ու
ամբողջ որդանիզմի վրա:

Այս է վաղաժամ սեռական հարաբերու-
թյունների փաստը: Սեռական հակումը զսպել չկա-
րողանալը կորստաբեր կերպով է անդրադառնում
տղաների ու աղջիկների և գալիք հնարավոր
սերնդի վրա:

Իսկ դրա չելքը վճռն է: Ի՞նչ պետք է անի
չերիտասարդությունը, վորպեսզի անախորժ այդ
բարդություններից խուսափած լինի: Պատաս-
խանը պարզ է և ինքնըստինքյան բղխում է բո-
լոր ասածներից: Մինչև այն ժամանակ, յերբ
որդանիզմը վերջնականապես հասունանա ու ձե-
վավորվի, մինչև այն ժամանակ յերբ սեռական
հարաբերությունները միանգամայն անփաստ դառ-
նան, մինչև այդ ժամանակ՝ անշուշտ անհրաժեշտ
է սեռական ժուժկալուծյուն:

Գլուխ IV

Սեռական ժուժկալուծյուն

Շատ մարդիկ սուտ համոզմունք ունեն, թե
սեռական ժուժկալուծյունն որդանիզմի համար
փաստակար է և վոր նյարդային ու հոգեկան մի-
շարք խանգարումներ է առաջ բերում: Յերբեմն
պատահում են այնպիսի ծնողներ, վոր պատ-
րաստ են իրենց ձեռքով իրենց յերեխաներին

պոռնկության գիրկը նետել, միայն թե նրանց
ազատած լինեն այն փաստից, վորն իբր թե սե-
ռական հարաբերությունների ժուժկալությունն
է առաջացնում:

Այս համոզմունքը սխալ է: Ժուժկալութ-
յունը վոչ միայն փաստակար չէ, այլև վորոշ
հասակում նույնիսկ ոգտակար է: Բայց ժուժկա-
լության հարցում մեծ տարածայնություններ
կան: Մի քանի դիտնականներ ու փիլիսոփաներ,
մանավանդ կրոնական մտածողները, կողմնակից
էին կատարյալ կուսակրոնական ժուժկալութ-
յան վողջ կյանքի ընթացքում: Իհարկե, կատարյա-
անմտություն է այդ: Բարեպաշտ սնահավատու-
թյունը, վորն ընդունում է, թե սեռական հա-
րաբերությունները պղծություններ են — անիրա-
կանալի, մարդու իսկ բնությանը հակասող, մի
գաղափար է: Հարցին դիտականորեն մոտենալով,
մենք պետք է կանգ առնենք այն տեսակետի վրա,
վորը ժամանակավոր ժուժկալության մասին է
խոսում — մենք հասկանում ենք ժուժկալության
մասին մինչև այն ժամանակ, յերբ սեռական հա-
րաբերությունները կատարելապես կարող են
թուլատրվել բժշկական տեսակետից:

Իսկ ի՞նչպես է ազդում ժուժկալությունն
որգանիզմի վրա: Այս մասին բժիշկների կարծիք-
ները չերբեմն տարբեր են լինում: Բայց մոտ

քսան տարի սրանից առաջ ռուսական և գերմանական համալսարանների աչքի ընկնող պրոֆեսորների մեջ այդ առթիվ անկետա յե կատարված յեղել, վոր նպատակ ե ունեցել լուծելու յերկու հարց. 1) տղամարդու համար սեռական ժուժկալուծյունը փաստակար ե, թե՞ ոգտակար. 2) յեթե փաստակար ե, վոր հասակից: Ստացված պատասխաններից պարզվել եր, վոր բոլոր հեղինակներն առանց բացառութիան սեռական ժուժկալուծյունը մինչև 20 տարեկան պատանիների համար անվնաս են համարում, իսկ 20 տարեկանից բարձր հասակի նկատմամբ՝ պատասխանողների ճնշող մեծամասնությունը նույնպես ժուժկալուծյունն անվնաս ե համարում:

Այսպիսի յեզրակացությունը, վորը հավասար չափով վերաբերում ե նաև յերիտասարդ կանանց, այն բանով առավել նշանակութուն ունի, վոր մեզ համար կարևորը սեռական կյանքից ժուժկալ մնալը չի ամենևին, այլ մինչև կատարյալ արբունքին հասնելը ժուժկալ մնալն ե: Սոսքը սեռական բավականություններից միանգամայն հրաժարվելու մասին չի, այլ չափազանց վաղաժամ սեռական հարաբերությունների շրջանն սկսելուց հրաժարվելու մասին ե:

Վողջախոհությունը (անարատ ապրելը) որդանիզմի համար վոչ մի փաստակար հետևանք

չունի։ Այս բանը պետք է լավ գիտենալ։ Այն մարդիկ, վորոնք իրենց ջղային քայքայումների համար ժողկալությունն են մեղադրում, դուրս ե գալիս, վոր մեծ մասամբ ժառանգական ջղագարներ են։ Ամենից շատ ջղագարներ պատահում են այն մարդկանց մեջ, վորոնք հեշտությամբ անձնատուր են լինում իրենց զգայական բռնկումներին, բան նրանց մեջ, վորոնք այս տեսակետից կարողանում են իրենց վրա իշխել։

Որինակ, հիշենք մի բան, վոր սպորտով պարապողների մեջ տարածված է այն համոզմունքը, վոր մարզանքի ժամանակ մրցումից առաջ սեռական ժողկալությունն անհրաժեշտ է։ Սպորտսմենների կամ ամբողջ ջոկատների աշխատանքների գրանցումները ցույց են տվել, վոր սեռական հարաբերություններից անմիջապես հետո, այսինքն՝ մեկ-յերկու՝ որվա մեջ, հաջողություններն առաջվանից պակաս են լինում։ Բայց պատահում են կասկածոտ մարդիկ, վորոնք ասում են, թե ընդհանրապես ժողկալությունն անհնարին է, թե հակումն այնքան ուժեղ է, վոր հաղթահարել այն—անկարելի չէ։ Այս հարցը, իհարկե շատ կարևոր է։ Սեռական հակումը մարդու ամենաուժեղ հակումներից մեկն է. հին իմաստուններից մեկի ասելով՝ «հակումը վաղի փղերին զսպող կարթից էլ սուր է, ավելի տաք

ե, քան բոցը. հակուժը մարդու մարմինը խրվող
հետին ե նման»:

Տղայի սեռական ձգտումի ծայր աստիճան
լարվածությունը 18 — 20 տարեկան հասակում
ե լինում: Այդ հասակում նրա մեջ ամենից ու-
ժեղ կերպով զարգանում ե դյուրագգայնությու-
նը, յերևակայությունը սաստկանում ե—բունն
անհանգիստ ե դառնում և հաճախ ընդհատվում
ե յերազախաբություններով ու յերկարատև
«կանգնումներով». Յերեկը նմանապես մի փոքր
ցնցումը գրգիռ ե առաջացնում: Ուժեղացած
սեռական ձգտումը մի քանի որ կամ մի շաբաթ
վորոշ բարձրության վրա յե մնում. հետո սկսում
ե նստել, մի առ ժամանակ հանգստանում ե ու
յերկու շաբաթից հետո նոր թափով ե կրկնվում:
Նման վերահասությունների (գրոհների) տևո-
ղությունն ու նրանց տեղի ունենալու ժամա-
նակն սկզբում շատ անկանոն են լինում: Պա-
տահական պատճառը — ընթերցանությունը, գրույ-
ցը, պատկերը, կնոջ հանդիպելը և այլն, հեշտու-
թյամբ գրգռում, սեռական բռնկում են առա-
ջացնում, վորը շարունակվում ե մի քանի որ:
Յեթե պատանին սեռական հակումը բավարարե-
լուց խուսափում ու պատշաճ կենցաղ ե վարում,
սեռական ձգտումների վերահասություններն աս-
տիճանաբար սկսում են իրենց ուժը կորցնել,

այնքան կատաղի չեն անցնում ու փոխարինվում են ավելի տևական և հանգիստ դադարներով:

Իհարկե, սեռական հակումի թափը յերիտասարդ մարդկանց մեջ տարբեր է: Պատահում է միջակ, թույլ սեռական հակում — այդպիսի մարդկանց՝ սեռական ժուժկալուծյունը հեշտությամբ է հաջողվում: Ընդհակառակը, պատահում են մարդիկ, վորոնց սեռական հակումը չափազանց ուժեղ է լինում, — ժամանակ առ ժամանակ նրանք ստիպված են լինում սեռական ժուժկալուծյունից շատ տուժել: Համակող հեշտասիրական մտքերը խանգարում են նրանց աշխատանքը և զրկում գիշերային հանգստից: Սակայն, այս դեպքում ևս ժուժկալուծյունը միանգամայն հնարավոր է: Ցանկացած դեպքում մարդ կարող է վորոշ սահմաններում զսպել իր սեռական բնազդը և ցանկալի հունի մեջ դնել այն:

Ճիշտ է, չիթե յերիտասարդ կանանց մասին խոսենք, սեպհական ցանկություններն ու ճրգտուժները ամենափոքր դերն են ունենում: Մենք խոսում ենք պոռնկության մասին, ընդհանրապես և մասնավորապես — այն սոսկալի յերևույթների մասին, վորոնք նկատվում են առանձնապես մեծ քաղաքներում, — յերեխաների պոռնկության մասին: Մի կտոր հաց ճարելու անհրաժեշտությունն աղջիկներին փողոց է քշում և ստի-

պուժ ե իրենց մարմինը վաճառքի հանել: Ի հարկե, յերեխաների պոռնիկության դեմ կռվելը միայն հասարակական միջոցներով — անապատտանությունը վերացնելու, աշխատանքային զաղութներ հիմնելու և նշուժական դրությունն ընդհանուր կերպով բարձրացնելու միջոցով ե հնարավոր:

Սեռական ժողովարության մասին խոսելիս, հետաքրքրական ե հիշել 1922 թվին Մոսկվայի համալսարաններից մեկի ուսանողների մեջ կատարած անկետան: Ի միջի այլոց, անկետան փորձում եր պարզել յերիտասարդության մեջ յեղած ժողովարության պատճառները: Պարզվել ե, վոր կանանց մեջ ժողովարության գերիշխող պատճառը սիրո բացակայությունն ե հանդիսանում: Ժողովարության յերկրորդ մոմենտը՝ սեռական պահանջ չլինելն ե և, վերջապես, յերրորդը — դանազան բարոյական նկատառումներն են: Տղամարդկանց մեջ բարոյական այդ նկատառումները յերկրորդ տեղն են բռնում, իսկ առաջին տեղում, իբրև ժողովարության հիմնական պատճառ, վեներական հիվանդությունների յերկյուղն ե կանգնած: Այս վերջինը շատ խորը հիմքեր ունի: Հաճախ այնպիսի հանգամանքներ են պատահում, վոր պատանու սեռական հակումը բավարարելու համար միակ միջոցը մնում ե՝ մեծ մասամբ վե-

ներական հիվանդութիւնով վարակված պոռնիկի հետ կապվելը: Իգուր չե, վոր սիֆիլիսը հռչակվում ե «անփորձ յերիտասարդության հիվանդութիւն» անվան տակ:

Բացի բոլոր ասածներից, սեռական ժուժկալության հարցը սեռական եներգիան «սուբլիմացիայի» չենթարկելու (վերացնելու) հնարավորության հետ առանձին կարեոր նշանակութիւն ե ստանում: «Սուբլիմացիա» կոչվում ե այն, վոր ստորին եներգիան բարձրագույնի չե անցնում, յերբ սեռական եներգիան իրեն համար ուղղակի անելիք չգտնելով, որինակ, ուղեղի գործունեյութիւնն ուժեղացնելու վրա չե գնում: Մասնավորապէս, մարդու ստեղծագործական գործունեյութիւնը սերտ կերպով կապված ե նրա սեռական բնագավառի հետ: Հենց նույն գիտնական Ֆրեյդը, վորին մենք արդեն դիմել ենք մեր գրքույկում, գտել ե, վոր, սկսած սեռական եներգիայի հասունացման շրջանից, սեռական եներգիայի մի մասը սեռական կյանքի նորմալ պահանջները բավարարելու վրա չե գնում, իսկ մյուս մասը — ավելի բարձ նպատակների՝ որինակ ստեղծագործության վրա: Հայտնի չե, վոր Պուշկինն իր ընտիր գործերը գրել ե այն շրջանում, յերբ հիվանդության պատճառով սեռական ժուժ-

կալություն եր պահպանում: Նորմալ չափի սե-
ռական պահանջը, իհարկե, պետք է բավարար-
վի, բայց նրա չափազանց շատ ինտենսիվ բա-
վարարումը, նրա վրա չափազանց շատ սեռա-
կան ուշժ վատնելը մարդուն զրկում է սեռական
այդ եներգիան «սուբլիմացիայի» լենթարկելու
այսինքն՝ այն ավելի բարձր խնդիրների համար
ոգտագործելու հնարավորությունից: Մասնավո-
րապես, հեղափոխական ցնցումների ժամանակ հա-
սարակական շարժումը, լերիտասարդությունն
ընդգրկելով, ոգտագործում է որդանիզմի մեջ,
կուտակված եներգիայի բոլոր տեսակները, վո-
րոնց թվում և սեռական եներգիան: Սեռական
եներգիան սոցիալականի յե փոխվում: Այս յե-
րևույթը տեղի յե ունենում սոցիալական ամեն
տեսակի, — կրոնական, քաղաքական և տնտեսա-
կան բնույթի, — շարժումների ժամանակ: Ի հար-
կե, մեր ապրած աշխարհի սոցիալական հեղափո-
խության շրջանում ել տեղի ունեն այդ փոխա-
րինումն ու ճնշումը: Մոսկվայի՝ 1922 թ. նոյն
անկետան, վորը հեղափոխության մեջ անմիջա-
կան մասնակցություն ունեցող մարդկանց է ընդ-
գրկել, պարզել է այդ փոխարինման մոտավոր
չափերը: Պարզվել է, վոր հեղափոխությունը սե-
ռական զգայության վրա հետևյալ կերպով է ազ-
դել.

Տղամարդկանց մեջ	Կանանց մեջ
Անփոփոխ ե թողել . 33,6 ⁰ / ₀	59,0 ⁰ / ₀
Ուժեղացրել ե . . . 13,4 ⁰ / ₀	9,5 ⁰ / ₀
Թուլացրել ե . . . 53,0 ⁰ / ₀	31,5 ⁰ / ₀
100 ⁰ / ₀	100 ⁰ / ₀

Տղամարդիկ, մասսայական չափով, հեղափոխության մեջ ավելի շատ են մասնակցել քան կանայք. ուստի հեղափոխությունը նրանց սեռական թուլության վրա առանձնապես խիստ կերպով ե ազդել: Ի՞նչպես պետք ե հասկանալ այդ թուլացումը: Սեռական եներգիան սոցիալականի փոխվեց: Սոցիալական եներգիան սեռականին վոչ խեղդեց, վոչ ել ճնշեց. սոցիալականը սեռականին կլանեց, ներս ծծեց. ոգտագործեց և հասարակական պայքարի ու ստեղծագործական հունի մեջ դրեց:

Ահա սեռական եներգիայի սուբլիմացիայի և սուբլիմացիան բարձր կարգի եներգիայի անցնելու հնարավորության այդ հարցը խոշոր նշանակութիւն ունի թե՛ անձնական և թե՛ հասարակական տեսակետից: Տղաներն ու աղջիկները, վորոնք չգիտեն, թե իրենց սեռական բնագավառում ինչ տակտիկա վարեն, պետք ե այս հարցի մեջ յերկու ճանապարհ տեսնեն. մի կողմից — սեռական կյանքը, վորը նրանց չամրապնդված որգանիղմների վրա անշուշտ քայքայիչ ազդեցու-

Թյուն ե ունենալու, իսկ մյուս կողմից—ժուժկալությունը, վորը սեռական եներգիան սուբլիմացիայի յենթարկելու շնորհիվ, նրանց ստեղծագործական գործունեյության խոհուն բավականություն ե խոստանում: Ուստի կասկած չկա, վոր նրանք յերկրորդ ճանապարհը պետք ե ընտրեն, վորովհետև սեռական կյանքը նրանցից փախչողը չի, նրանք կվերցնեն այդ կյանքից այն բոլորը, ինչ հնարավոր ե, բայց այն ժամանակ, յերբ այդ ուժեղ փնաս չի լինի վոչ իրենց իսկ, վոչ ել իրենց սերունդների համար:

Վորպեսզի սեռական ժուժկալության հարցը վերջնականապես պարզ դարձրած լինենք, պետք ե ելի մի քանի կողմնակի յերևույթների վրա կանգ առնել, վորոնք կարող են պատահել ժուժկալության ժամանակ:

Մենք արդեն ասացինք, վոր տղամարդու սեռական վերապրումների ամենավաղաժամ ու սուր յերևույթներից մեկը յերազախաբություններն են: Այնպիսի մոմենտներ են պատահում, վոր արյան հոսանքի հետ որգանիզմի բոլոր անկյունները, վորոնց թվում ե նյարդային համակարգության մեջ տարվող՝ տղայի ձվերի մեջ առաջացած սերմի կուտակումն ու հորմոնների արտաթորու-

թյունը գրգռում են նյարդային համակարգու-
թյունը և սեռական ձգտում առաջացնում: Սո-
վորաբար քնի ժամանակ է պատահում այդ: Սե-
ռական անգամը գրգռվում, ապա տեղի յե ու-
նենում սերմնահոսություն: Առանց սեռական ակտ-
կատարելու՝ նման սերմնահոսությունը կոչվում
է յերազախաբություն: Ընդ վորում, յերազում
բազմապիսի հեշտասիրական պատկերներ—սե-
ռական ակտի յերևույթներ, սիրած աղջկա հետ
մերձեցում ու այլ բաներ են տեսնվում:

Յերազախաբությունների տեղի ունենալը սո-
վորաբար սեռական հասունություն տեղի ունե-
նալ է նշանակում: Ժուժկալության ժամանակ
յերազախաբություններ պատահելն առանձնապես
անհանգստություն չպետք է առաջացնի: Յեթե
տղայի մեջ յերազախաբությունները չափազանց
շատ չեն առաջանում, այլ առաջանում են սեռա-
կան հասունությանը զուգընթաց, սակավ են
կրկնվում (10—30 օրվա ընթացքում մի անգա-
մից վոչ ավելի) և հեշտասիրական յերազների
հետևանքով միայն գիշերն են տեղի ունենում,
այդ բանը կարելի չե ընդունել վորպես նորմա-
լին մոտիկ յերևույթ: Այլ բան է, յերբ յերա-
զախաբությունները հաճախ են տեղի ունենում,
շաբաթը մի քանի անգամ, նույնիսկ ամեն օր
կրկնվելով, մանավանդ, յեթե յերազախաբու-

Թյունները վաղ են սկսվում, տղաներինը՝ նորմալ սեռական հասունությունից 9—10 տարի առաջ։ Նման հաճախակի յերազախաբությունները հիվանդագին յերևույթ պետք է համարել արդեն։ Սովորաբար դրանց հետևանքները լինում են՝ ընդհանուր հոգնածության զգայություն, ջարդվածություն, մեջքացավ և վատ տրամադրություն։ Այդպիսի դեպքերում պետք է դիմել բժշկի։

Յերազախաբության հիվանդագին բնույթն էլ ավելի չէ սրվում, յերբ սերմնահոսությունն սկսում է տեղի ունենալ վոչ թե գիշերը, այլ ցերեկը (ցերեկվա յերազախաբություններ) բույորովին արթուն ժամանակ. սեռական գործարանի ամենափոքր մեքենայորեն գրգռվելու դեպքում, ըստ վորում, հաճախ նույնիսկ առանց վորևե հեշտասիրական ցանկությունների յե տեղի ունենում։ Նման յերազախաբությունները սեռական որգանների հիվանդագին յերևույթներով են ընթացակցվում, և յեթե նրանք գիշերն են պատահում, այդ դեպքում վոչ թե հեշտասիրական յերևակայությունների ազդեցության տակ են տեղի ունենում, այլ զարհուրելի յերազների ազդեցության տակ։ Յերեկն այդ յերազախաբությունները ջարդված ու ճնշված դրություն են ստեղծում։ Այս յերազախաբություններն ապացուցում են նյարդային համակարգության խիստ քայքայվածու-

թյունը, վորը հատուկ բժշկությունն է պահանջում: Բայց այս բանն այնքան ել հաճախ չի պատահում: Իսկ յերազխաբուծյունն ընդհանրապես մի յերևույթ է, վորը տղամարդու ժուժկալությանն է ընթացակցում և յեթե այն չի ընդունում այժմ իսկ նկարագրած հիվանդագին ձեվերը, նրանց առաջանալու մասին առանձնապես անհանգստանալ պետք չէ: Նորմալ սեռական կյանքի անցնելու հետ յերազխաբուծյուններն ինքնրստինքյան կչքանան:

Յերազխաբուծյուններ կանանց հետ ել են պատահում: Ընդ վորում, տեղի յե ունենում նույնը, ինչ վոր զուգավորման ժամանակ է պատահում. արգանդի մկանները կարճանում են ու սեռական ապպարատի գեղձերից լորձունք է հոսում: Դեպի կանացի յերազխաբուծյունները տանողը նույնպես սիրային յերազատեսություններն են: Սովորաբար յերազխաբուծյունները պատահում են այն կանանց, վորոնք զրկված են իրենց համար սովորություն դարձած սեռական կյանքից, որինակ, յերիտասարդ այրիների հետ: Նման յերազխաբուծյունները, յեթե շատ հաճախ չեն կրկնվում, բնական յերևույթ պետք է համարել: Իսկ յեթե դրանք հաճախակի յեն դառնում, յեթե սկսում են ցերեկները տեղի ունենալ և իրենց յետևից անբավարարության ու ջարդվա-

ծուծիան զգայություն թողնել, պետք է բժշկել,
վորովհետև դրանք արդեն հիվանդութիան հետե-
վանք են:

Շատ հաճախ արթնացած սեռական հակուժ-
ներն իրենց համար բնական յելք չգտնելով, պա-
տանիներին «մաստուրբացիայի» կամ այլ կերպ
ասած՝ «ձեռնաշարժութիան» են հասցնում: Պա-
տանիները ձեռքերով գրգռում են սեռական գոր-
ծարանները, իրենց հասցնում են գրգռման ծայր
աստիճանին և սեռական բավականութիան նման
մի բան ստանում: Յերբեմն նկատվում է, այս-
պես ասած, «մտավոր ձեռնաշարժություն», վո-
րի հետևանքն այն է լինում, վոր հեշտասիրա-
կան պատկերի մտավոր պատկերացումն արդեն
հեշտասիրական զգացողութիան լարվածություն
և նույնիսկ կանգնում է առաջացնում:

Յերբեմն ձեռնաշարժությունը նկատվում է
նույնիսկ ծծկեր յերեխաների մեջ, յերեխան իր
սեռական գործարաններին դիպչելիս, սեռական
բավականություն է զգում: Ավելի ուշ հասակում
ձեռնաշարժությունն արդեն լրջմիտ բնույթ է
կրում: Յերեխան, պատահամամբ ձեռքն առնե-
լով իր սեռական անդամը (որինակ, միգելու ժա-
մանակ) և միաժամանակ ստանալով հաճելի զգա-

յություն, հետագայում արդեն դիտավորյալ կերպով ե դիպչում նրան՝ վորպեսզի բավականութուն ստանա, տրորում ե այն, և այլն: Ձեռնաշարժության պատճառը հաճախ ընկերներն են լինում: Դպրոցներում, պանսիոններում բանտերում, յերեխաների կողմից մեկը մյուսին զայթակղեցնելու հետևանքով յերբեմն ձեռնաշարժության ամբողջ համաճարակներ են նկատվում:

Ձեռնաշարժության պատճառ կարող են ծառայել նաև սեռական գործարանների տեղական բնութի հիվանդությունները, որինակ քոր առաջացնող աղջիկների բծերը—առանձին ճիճուները (փորի կլոր ճիճու), վորոնք հետանցքի շրջանից սեռական գործարանների վրա յեն սողում ու սաստիկ քոր առաջացնում:

Սակայն, այս բոլորը դեպի ձեռնաշարժությունը դրդող պատճառներ են միայն: Իսկ ինքը՝ ձեռնաշարժությունն ավելի խոր արմատներ ունի: Ձեռնաշարժության հիմնական պատճառը—մարդու բնության մեջ յեղած անհամապատասխանությունն ե, այն ե՝ սեռական զգայության վաղաժամ զարգացումը: Այս զգայությունը, ինչպես մենք տեսանք, շատ վաղ ե զարգանում: Տարեցտարի զգայությունն ավելի ու ավելի յեսաստկանում և լարվածության գազաթնակետին հասնում ե այն ժամանակ, յերբ սեռական հա-

սունությունը դեռ չի ավարտվել, յերբ դեռ տղամարդկանց մեջ կատարելապես հասունացած՝ սերմնային մարմիններ ունեցող սերմնային հեղուկ չի պատրաստվում: Սեռական ցանկությունը դալով այնպիսի հասակում, յերբ զուգավորման մասին խոսք անգամ լինել չի կարող, տղաներդ ինքնաբավարարման, այսինքն ձեռնաշարժության են դիմում:

Այստեղ մեծ նշանակություն ունի նաև ժառանգական ազդեցությունը: Զղագարների յերեխաները նույնպես հաճախ թույլ նյարդերով են ծնվում և իրենց ցանկությունները լավ չեն կարողանում զսպել:

Սեռական հասունությունը տեղի ունենալուց հետո, սեռական զգայությունը շատ լարված բնույթ կարող է կրել: Ապրել ժուժկալ, հաղթել իրեն, իշխել իր սեռական ձգտումներին ամեն անգամ հեշտ չի լինում: Բայց միաժամանակ, այդպիսի դեպքերում ամեն անգամ հնարավոր չի լինում գտնել ուրիշ սեռի մի եյակ, վորի հետ կարելի լիներ սեռական հարաբերություններ սկսել: Ուստի ժուժկալ ապրող մարդը հանկարծակի բորբոքվող սեռական բռնկումի ազդեցությանը հաճախ է չենթարկվում ու ձեռնաշարժությամբ է իրեն հագուերդ տալիս:

Ձեռնաշարժությունը չափազանց հաճախ պա-

տահող յերևույթ եւ Յենթադրում են վոր, «հար-
յուր մարդուց ինսունիննը ձեռնաշարժությամբ
են զբաղվել, իսկ հարյուրյերորդը ծածկում ե
այն»։ Ձեռնաշարժությունն անկասկած կապ ու-
նի ժուժկալության հետ։ Չե՞ վոր ուր յերիտա-
սարդ, ամրակազմ շատ տղամարդիկ են հավաք-
ված լինում, վորոնք սեռական բնազդին հա-
գուրդ տալու հնարավորությունից վորեն պատ-
ճառով զրկված են, այնտեղ ձեռնաշարժությունը
զարգանում ե իր բոլոր պես-պես ձևերով։ Նա-
վագնացության ժամանակ նավաստիների մեջ,
զորանոցներում ու արշավանքի ժամանակ — զին-
վորների մեջ, բանտում նստածների ու այլոց
մեջ բռնի ժուժկալությունը — այս բոլորը դեպի
ձեռնաշարժությունն են տանում։ Մի որինակ ևս
հետաքրքրական ե։ Հայրենիքից Ամերիկա մեծ
թվով աշխատանքի գնացող չինացիք իրենց հետ
կանայք չեն վերցնում և միաժամանակ, կրոնական
նկատառումներով, չեն մերձենում այն ժողո-
վուրդներին, վորոնց հետ ստիպված են ապրել։
Այդ չինացիների մեջ ձեռնաշարժությունը լայն
կերպով ե տարածված։ Ձեռնաշարժությունը պա-
կաս տարածված չի նաև բոլոր յերկիրների վան-
քերում։

Բոլոր ասածները վերաբերում են նաև կա-
սանց, յերիտասարդ, առողջ կանայք, վորոնք սե-

ռական նորմալ հարաբերություններ են ունեցել ու վորեւ պատճառով զրկվել են դրանցից (որինակ յերիտասարդ այրիները) ձեռնաշարժություններ շատ հաճախ են կատարում: Մահմեդական յերկիրներում ձեռնաշարժությունը շատ ե տարածված՝ ժուժկալ մնալու դատապարտված հարեմներում փակված կանանց մեջ:

Ներկայումս ինչպես են նայում ձեռնաշարժության վրա: Սկզբում ինքնաբավարարման վրա նայում եյին իբրեւ մի մեծ ախտի վրա, վոր վերջիվերջո քայքայում ե այդ սովորությանն անհնատուր չեղած մարդու որդանիզմը և խորտակում այն: Բազմապիսի գրքերում ամեն կերպ վախեցնում եյին ձեռնաշարժությամբ պարապողին, խոստանալով նրան և՛ թոքախտ, և՛ խելագարություն, և՛ տանջալից, սոսկալի մահ: Այժմ այդ հարցի վրա բոլորովին այլ կերպ են նայում: Յեթե հասակավոր, կատարելապես հասունացած մարդու մասին խոսենք, ձեռնաշարժությունն որդանիզմի վրա քիչ բանով ե վատ ազդում քան սովորական սեռական հարաբերությունները: Ճիշտ ե, որդանիզմի վրա ազդող՝ ձեռնաշարժության ակտի ու զուգավորման միջև վորոշ տարբերություն կա: Սեռական ակտի ժամանակ զրգիռն ինքնաբերաբար ե զարգանում, առաջ գալով ու-

ըիշ սեռի ելակից, վորը սեռական հակուժի պատ-
ճառ ե գառնուժ: Իսկ ինչ վերաբերուժ ե ձեռ-
նաշարժությանը, այստեղ գրգիռը գլխավորապես
յերևակայության խաղով և մտքովն անցնող հեշ-
տասիրական պատկերներով ե առաջ գալիս, վո-
րոնք արհեստական կերպով են ստեղծվուժ: Ի
հարկե, յեթե սեռական ակտի ժամանակ նշար-
դային եներգիան չափազանց շատ ե ծախսվուժ,
ապա ուրեմն ձեռնաշարժության ժամանակ այդ
եներգիան ել ավելի յե ծախսվուժ, ուստի մեծ ե
լինուժ նաև հետո տեղի ունեցող հոգնածությունը,
և սանձարձակությունների դեպքում շուտով տե-
ղի յեն ունենուժ հիվանդագին յերևույթներ:

Բայց այս բանը միանգամայն հասունացած
մարդու համար ե ասվուժ: Իսկ ինչ վերաբերուժ
ե յերիտասարդներին, վորոնց նկատմամբ փա-
սակար են և սեռական հարաբերությունները,
այստեղ՝ ձեռնաշարժությանը կռիվ պետք ե
հայտարարվի: Իհարկե, չպետք ե հուսահատվել,
յեթե բորբոքված սեռական հակուժը ձեռնաշար-
ժության ակտի մեջ ե թեթևություն գտել—
չպետք ե իրեն պարտված, խորտակված, իր ա-
ռողջությունը վերջնականապես քայքայված մարդ
համարել: Ձեռնաշարժության մեջ սրա առանձին
դեպքերն այնքան վտանգավոր չեն, ինչպես այն,
վոր ձեռնաշարժությունը հեշտությամբ սանձար-

ձակությունների յե անցնում. վորովհետև, յեթե
 տվյալ դեպքում տղային ու աղջկանը սեռական
 նորմալ հարաբերություններից կարող ե կասեց-
 նել ուրիշ սեռի եյակ ճարելու անհնարինությու-
 նը, վորի հետ կարելի լիներ կապ հաստատել,
 ապա ձեռնաշարժության նկատմամբ այդ բանը
 չկա. սեռական բավականություն ստանալու հա-
 մար միշտ ել հնարավորություն կա: Ձեռնաշար-
 ժությամբ պարապող մարդու համար իր հակու-
 մը բավարարելը վոչ մի դժվարություն չունի,
 և նա այդ շատ հաճախ կարող ե անել: Հենց
 այստեղ ել ձեռնաշարժության գլխավոր վտանգն
 ե թագնված: Ձեռնաշարժությունը մանավանդ
 վտանգավոր ե այն ժամանակ, յեթե սեռական
 հասունությանը դեռ չհասած ու թույլ որգա-
 նիզմի տեր պատանին ե նրան անձնատուր լի-
 նում, վորը դեռ չի կարողացել ինչպես պետք ե
 ձևավորվել: Ինչպես սեռական հարաբերություն-
 ների դեպքում, (վորոնք նման պատանու համար
 նույնպես չափազանց վտանգավոր են), այնպես
 ել առավել ևս ձեռնաշարժության դեպքում, տե-
 ղի յե ունենում եներգիայի մեծ վատնում, պա-
 հեստի ուժերի քայքայում, վորոնք մատաղ որ-
 գանիզմի համար այնքան անհրաժեշտ են:

Իսկ ինչպես պետք ե կռվել ձեռնաշարժու-
 թյան դեմ: Առաջին հերթին ձեռնաշարժության

բժշկութիւնը նախագգուշական բնույթ պետք է
կրի: Այն բոլորը, ինչ վոր գրգռում ու սաստ-
կացնում է սեռական հակումը, այդ բոլորը զար-
տուղի ճանապարհով ձեռնաշարժութեան զարգա-
ցում է սպառնում: Ուստի պետք է խուսափել
այն բոլորից. ինչ վոր սաստկացնում է սեռա-
կան հակումը¹⁾: Բոլոր այս միջոցները խիստ կեր-
պով հեշտացնում են սեռական ժողկալութեան
հնարավորութիւնը:

ՎԵՐՋԱԲԱՆ

Գործնական խորհուրդներ

Այստեղ առաջին տեղը բռնում են որգա-
նիզմը պնդացնելն ու կանոնավոր կենցաղը: Որ-
գանիզմի ֆիզիկական զարգացումն ու ամրապըն-
դումը շատ մեծ դեր են խաղում: Ցանկալի յե-
մարմինը շփել սառը ջրով (բայց լավ կլինի այդ
ժամանակ չդիպչել սեռական գործարաններին),
հով վաննաներ ընդունել և այլն: Տաք վան-
նաները թե մեծերի ու թե յերեխաների մեջ

¹⁾ Ձեռնաշարժութեան մասին մանրամասն տես
«Ձեռնաշարժութիւն, նրա պատճառները, հետևանք-
ներն ու նախգգուշական միջոցները» բրոշյուրի մեջ
«Կոսմոս»:

սեռական գրգիռն ուժեղացնում են, ուստի ցանկալի լե խուսափել դրանցից:

Ոգտակար են ֆիզիկական վարժուժյունները: Նստակյաց կյանքն արյան մակընթացություն է առաջացնում դեպի իրանի ստորին մասի գործարանները և այդպիսով շատացնում սեռական գրգիռը. ընդհակառակը, շարժուն խաղերը, սպորտը, մանգալը — հակազդում են դեպի սեռական գործարանները պնացող և արյան ուժեղացած հոսանքին և արյունը հավասար շափով բաժանում ամբողջ մարմնի մեջ, վորի հետևանքով թուլանում է սեռական զգայությունը: Բացի այդ, ֆիզիկական պարսպմունքներն ընդհանրապես զվարթացնում են մեր հոգեբանությունը սեռական բնազավառից ուրիշ կողմ դարձնում մեր մտքերը:

Պակաս նշանակութուն չունի նաև զգեստի տեսակը: Պետք է խուսափել բրդե սպիտակեղենից, վորը կարող է սեռական գործարանները գրգռել: Զգեստը պետք է լինի լայն ու ազատ, վորպեսզի վարտիքի նեղ յեղրերը չսեղմեն սեռական մասերը: Վարտիքը պահելու համար պետք է վարտիքակալ (подтяжка) կրել և վոչ թե վարտիքի վրա գոտի կապել, վորովհետև վերջինս արյան մակընթացություն է առաջացնում դեպի վորի ստորին մասը: Այն մասին, թե նը-

ման մակրնթացութիւնը սաստկացնում է սեռական հակումը, արդեն ասված է: Հենց այս պատճառով ել կանանց հարկավոր է խուսափել ամուր կապերից:

Ցանկալի չէ, վոր անկողինը կոշտ ու հով լինի: Գիշերային «կանգնումների» մեծ մասը տեղի չէ ունենում այն պատճառով, վոր տղան չափազանց փափուկ ու տաք մահճակալի վրա չէ պառկում: Պետք է սովորել այնպիսի դրության մեջ քնելու, վորպեսզի ձեռքերը վերմակից դուրս լինեն — վորպեսզի գիշերն անգիտակցաբար չգըրգըռեն սեռական գործարանները: Պետք է սովորութիւն դարձնել անկողնի մեջ պառկելու վոչ առաջ, քան իսկապես քունն է գալիս, իսկ արթնանալու ժամանակ անմիջապես վեր կենալ, առանց թափալելու անկողնի մեջ: Մահճակալի վրա յերկուսով չպետք է քնել, նույնիսկ համասեռ անձի հետ:

Այն դեպքում, չերբ սեռական զգացողութիւնը չափազանց սաստկացել է, նրա դեմ կռվելու միջոցներից մեկը կերակրի սահմանափակումն է: Անբավարար սնունդը, ինչպես սովի տարիներն են ապացուցել այդ, ճնշում է սեռական հակումը: Առանձնապես պետք է խուսափել գիշերն ստամոքսը դժվարամարս կերակուրներով լցնելուց, վորովհետև քունն անհանգիստ է դառնում,

իսկ տեղի ունեցող մարսողութիւնը սեռական
բնագավառում արյան մակընթացութիւնն ու
գրգիռն եւ առաջացնում: Գիշերները նույնպէս
չպետք եւ շատ խմել, վորովհետեւ միզապարկը
լցվելը նմանապէս կարող եւ սեռական գրգիռ ա-
ռաջացնել: Գրգռիչ նյութերի ու քաղցրավենիքի
դործածութիւնը ցանկալի չի. ձեռնաշարժու-
թյան կամ սաստկացած սեռական հակումի դեմ
կռվելու ժամանակ վոգելից խմիչքների դործա-
ծութիւնն արգելվում եւ:

Այս բոլորը ֆիզիկական ինքնադաստիա-
րակմանն են վերաբերում: Բայց մեծ ուշադրու-
թիւնը բարոյական դաստիարակութեան վրա պետք
եւ դարձնել: Պետք եւ հեռու մնալ անհարմար տպա-
վորութիւններից, պետք եւ աշխատել խուսափել
այն ամենից, ինչ վոր ավելորդ տեղը գրգռում
եւ սեռական զգայութիւնը: Թեթեւամիտ գրքե-
րը, թատրոնական նույնպիսի ներկայացումներն
ու վորոշ պատկերները՝ սեռական զգայութիւնն են
գրգռում: Հասկանալի չե, վոր դժվար եւ հաղթա-
հարել իր սեռական զգայութիւնն ու այն դնել
շրջանակի մեջ, յերբ մարդ հաճախ գրգռում եւ
իրեն բազմապիսի երոտիկ տեսարաններով, գրքե-
րով, կամ զրուցներով:

Հարկավոր եւ, մատաղ հասակի հորդաբուխ
եներգիան վոչ թե սեռական կյանքի յերևույթ-

ների վրա կենտրոնանա, այլ ուրիշ ուղղու-
թյուն ստանա: Եներգիան, ինչպես մենք գի-
տենք, կարող է մեկ ձևից մյուսի փոխարկվել:
Սեռական եներգիան նույնպես կարող է ուրիշ
տեսակների փոխարկվել թե, մասնավորապես,
ստեղծագործական եներգիայի, և թե ընդ-
հակառակը, աշխատանքի չոգսագործած պահան-
ջը կարող է սեռական կիրքը սաստկացնել: Ծու-
լությունն ու պարապությունը յերիտասարդնե-
րին շատ հաճախ են խանգարում հաղթահարել
իրենց սեռական ձգտումները, իսկ ընդհակառա-
կը, աշխատանքը—խելացի ու հետաքրքիր աշ-
խատանքը, մտքերն ուրիշ կողմ ուղղելով և
կուտակված եներգիային առողջ յելք տալով,
սեռական ավելորդ կրքոտության դեմ կռվելու
լավագույն միջոցներից մեկն է հանդիսանում:


Հետևապես, յերիտասարդներին վաղաժամ
սեռական հարաբերությունների փնասից պաշտ-
պանող սեռական ժուժկալությունը միանգամայն
հնարավոր է: Կարիք չկա խոսելու այն ժամա-
նակվա ժուժկալության մասին, յերբ որգանիզմն
արդեն բոլորովին հասունացել է և առողջ սերունդ
արտադրելու ընդունակություն է ձեռք բերել:
Սեռական բնագոյը մարդու հիմնական բնագոյնե-
րից մեկն է, և ամբողջ կյանքի ընթացքում ժուժ-
կալ մնալու գաղափարն, իհարկե, անմտություն

ե: Բայց մինչև որգանիզմի կատարյալ ձևավորման շրջանին հասնելը ժուժկալությունը վոչ միայն հնարավոր է, այլև՝ ոգտակար է: Ժամանակավոր ժուժկալությունը նույնիսկ ամենաուշ հասակում ել է ոգտակար, վորովհետև կուտակված սեռական լարվածությունը հոգևոր ստեղծագործության ոգտին է գնում: Մտավորապես հռչակված և ուժեղ կերպով զարգացած սեռական պահանջների տեր մի ամբողջ շարք մարդիկ իրենց գրությունների մեջ խոստովանում են, վոր ժուժկալության ազդեցության տակ նրանց մեջ տեղի չե ունենում մտավոր ընդունակությունների առանձին խորացում ու կենտրոնացում, վորոնք, անշուշտ, նրանց մտավոր աշխատունակությունն են բարձրացնում:

Արդ, բոլոր վերոգրյալից չեզրակացությունը պարզ է. մարդկային թանկագին եներգիան քաջքայող՝ անկարգ ու չափազանց վաղաժամ սեռական հարաբերությունների տեղ պետք է յերեվան գա ապագա մարդու առողջությունը, — մարմնական և հոգեկան առողջությունը յերաշավորող, — սեռական խելացի ժուժկալությունը:

Ց Ա Ն Կ

	Եջ
Ներածութիուն	3
Գլուխ I Սեռական հասունութիուն	10
» II Սեռական հակումն	30
Գլուխ III Վաղաժամ սեռական կյանքը	48
» IV Սեռական ժողովարարութիուն	57
Վերջաբան. Գործնական խորհուրդներ	78



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038920

[194]

ԳԻՆՆ Ե 35 ԿՈՊ.

A $\frac{I}{4160}$

